ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՈՒՐԲԱԹ
21 ՄԱՐՏԻ 2014թ №5 (313)

www.syuniacyerkir.am

Մութը կանցնի, ու մառախուղը անծայր Հուշ կդառնա, հնամենի մի զրույց...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

«Հայոց արծիվների» 3-րդ համագումարը

Հասարակություն

Մարտի 15-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Մարշալ Բաղրամյանի անվան զորավարժարանում 1070 պատվիրակի եւ բազմաթիվ հրավիրյալների ներկայությամբ կայացավ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության 3-րդ համագումարը:

Պատվիրակներն ու ներկաները բուռն ծափերով ընդունեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ողջույնն ու շնորհավորանքը:

Համագումարի աշխատանքն սկսելուց առաջ մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին Արցախյան ազատամարտում եւ հայրենիքի սահմանների պաշտպանության համար զոհված հերոսների հիշատակը:

Համագումարն աշխատանքն սկսեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հայրապետական օրհնությամբ, որը բերել էր Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն եպիսկոպոս Ադամյանը:

«Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության նախագահ Խաչիկ Ասրյանը հանդես գալով զեկույցով՝ նշեց, որ հանրապետության տարածքում հիմնադրվել է 300 մասնաճյուղ, կազմակերպությանն անդամագրվել է 44000-ից ավել քաղաքացի: Կազմակերպությունը համապետական, եկեղեցական եւ մարզամշակութային տոների ժամանակ մեծ շուքով ու գաղափարաբանությամբ կազմակերպել է 400 խոշոր միջոցառում, իսկ ռազմահայրենասիրական դաստիարակության եւ քարոզչության նպատակով հայոց բանակի զորամասերում եւ սահմանագծի մարտական հենակետերում իրականացրել 150 այցելություն ու միջոցառում: Մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը նոր թափ հաղորդելու նպատակով ՀՀ եւ ԼՂՀ դպրոցներին կազմակերպությունը նվիրել է 1350 լրակազմ գերմանական արտադրության օդամղիչ հրացան: Այնուհետեւ նա ասաց. **«««Հայոց արծիվներ» հայրենասի-**

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

Գորիսի քաղաքապետի ընտրությունը՝ հունիսի 8-ին

Օրակարգ

Գորիսի քաղաքապետի ընտրությունն ամենայն հավանականությամբ տեղի կունենա 2014թ. հունիսի 8-ին: Դեռեւս 2013թ. հոկտեմբերի 1-ին է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանել 2014թ. ՏԻՄ ընտրությունների քվեարկության օրերը, ըստ որի՝ ընթացիկ տարում ընտրության օրեր են սահմանվել մարտի 9-ը, հունիսի 8-ը, հոկտեմբերի 13-ը եւ դեկտեմբերի 14-ը:

Գորիսի քաղաքապետի նախորդ ընտրությունները տեղի են ունեցել 2010թ. հունիսի 20-ին, 2006թ. մայիսի 21-ին, 2003թ. հունիսի 22-ին եւ 2000թ. հուլիսի 13-ին:

Մոտ 16 հազար ընտրող ունեցող Գորիսում նախորդ ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցել է ընտրողների շուրջ 50 տոկոսը: Այսպես՝ 2000 թվականին՝ 8500, 2003 թվականին՝ 6700, 2006 թվականին՝ 8107, 2010 թվականին՝ 8562 ընտրող:

Գործող քաղաքապետ Նելսոն Ոսկանյանի լիազորությունների ժամկետն ավարտվում է 2014թ. օգոստոսի 17-ին, եթե, իհարկե, ինքը չառաջադրվի եւ չվերընտրվի կրկին կամ ժամանակից շուտ հրաժարական չներկայացնի:

Գորիսն ընդգրկված է N37 ընտրատարածքում, որի ընտրական հանձնաժողովի նախագահն Արմեն Ստեփանյանն է: Գորիսում ավան-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 2



Հանրապետության ոստիկանապետը՝ Սյունիքում

Մարտի 13-ին մարզպետարանի դահլիճում ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը հանդիպեց մարզի իրավապահ մարմինների, քաղաքային եւ գյուղական համայնքների ղեկավարների, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների պատասխանատուների, մարզկենտրոնի դպրոցների տնօրենների հետ: Դրան նախորդել էր ոստիկանապետի աշխատանքային խորհրդակցությունը ոստիկանության Սյունիքի մարզային վարչության աշխատակիցների հետ: Մարզկենտրոնի դահլիճում բացելով խորհրդակցությունը՝ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը նշեց, որ նման ձեւաչափով սա ՀՀ ոստիկանապետի հետ անդրանիկ հանդիպումն է եւ ակնկալեց մարզի հիմնախնդիրներին առնչվող կառուցողական քննարկում:

Վլադիմիր Գասպարյանն իր խոսքում նշեց, որ վերջին 2.5 տարում, իր ձեւակերպմամբ, ոստիկանությունն անցել է վերափոխումների, ձեւափոխումների, բարեփոխումների ճանապարհ, ինչի դրական արդյունքները նկատելի են մայրաքաղաքում, իսկ մարզերում որոշակի թերություններ կան, որը բխում է հանրապետության ոստիկանության աշխատառճից: Ուստի 2014-ին իրենք ընտրել են մարզերի հետ աշխատելու մարտավարություն: **«Ոստիկանությունը զարգացում կարող է ապրել ինչ-որ մի ժամանակահատված,** - փաստեց ոստիկանապետն ու հավելեց, - **բայց այդ զարգացումը չի դառնում շարունակական, որքան էլ տարօրինակ հնչի, փորձեցինք համակարգն ազատել «անշարժ գույքերից», «զբոսաշրջիկներից», այս կամ այն պատգամավորի, այս կամ այն նախարարի, կուսակցության, հեղինակության նշանակած մարդկանցից, ովքեր ոչ թե ոստիկանության եւ հասարակության շահերն էին պաշտպանում, այլ իրենց հովանավորների, միեւնույն է, հիվանդությունն ամբողջությամբ բուժված չէ: Պարզորոշ է, որ կան երեւույթներ, որոնցից մենք պիտի ազատվենք: Թվում է, թե ամեն ինչ շտկված է, բայց ներքուստ զգում ես, որ ինչ-որ բան, ինչ-որ տեղ ճիշտ չի աշխատում, եւ դա է մեզ ստիպում, որ աշխատենք ձեզ հետ, որպեսզի դուք նկատեք ու տեսնեք, նաեւ հուշեք այն, ինչ մենք չենք տեսնում, մեր բարեփոխիչների թիմը չի տեսնում... Սրա փոխարեն մենք ձեզ փոխանցելու ենք մեր աջակցությունը, սկզբունքայնությունը, մեր արդարությունը»:**

Կարեւորելով Սյունիքի մարզի ռազմավարական նշանակությունը հանրապետության համար, Վլադիմիր Գասպարյանը հանդիպման մասնակիցներին հորդորեց անզիջում լինել բացասական երեւույթների հանդեպ. **«Այս տարածաշրջանը ե՛ւ մեր առաջին գիծն է, ե՛ւ մեր թիկունքն է, եւ այստեղ մենք ավելի կազմակերպված պիտի լինենք»:** Նաեւ անդրադարձավ թմրամիջոցների անօրինական շրջանառության խնդրին. **«Այս տարածքում՝ Իրանի սահմանում, թմրանյութեր կան եւ շատ կան: Ինձնից լավ գիտեք, որտեղից ով է բերում, դուք գիտեք այդ շշուկները, ուղղակի անպատասխանատու եք, թվում է,**

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 2

Սիսական գունդը 20 տարեկան է

Հոբելյան

Մարտի 8-ը սիսիանցիների համար կրկնակի տոն էր: Սիսական գունդը նշում էր կազմավորման 20-ամյակը: Իրար հաջորդելով՝ Սիսիանի Սիսակ Նահապետի անվան հրապարակ են մտնում սակրավորներն ու հետախույզները, դիրքապահներն ու մոտոհրաձիգները, ազատամարտիկներն ու մատաղ սերնդի ներկայացուցիչները:
Օրեր շարունակ քաղաքի կենտրոնական հատվածը տոնական տեսքի էր բերվում: Տոնն առիթ էր մեկ անգամ եւս խոսել Սիսական գնդի անցած մարտական ուղու, ձեռքբերումների մասին:

Զորահանդեսին ներկա էին Վայոց ձորի եւ Սյունիքի մարզպետերը, առաջին եւ չորրորդ բանակային կորպուսների հրամանատարներ՝ գնդապետ Տիգրան Փարվանյանը եւ գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանը, բարձրաստիճան այլ հյուրեր:

Զորահանդեսից առաջ ներկաները քայլելով բարձրացան դեպի քաղաքային պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու բոլոր այն տղաների հիշատակին, ովքեր ընկան, որ ապրեցնեն մի ողջ ժողովրդի, ընկան՝ չտեսնելով այսօրվա խաղաղությունը, կայացած ու մարտունակ բանակը:

Ծաղիկներ խոնարհվեցին նաեւ գնդի հիմնադիր հրամանատար Հովիկ Ազոյանի շիրմին: Ազոյանի 7-ամյա թոռը՝ Բասենցի Ազոյանը պապիկի մասին շատ բան գիտի, որոշել է նրա պես զինվորական դառնալ, շարունակել պապի կիսատ թողած գործերը:

Սիսիանի կենտրոնական հրապարակում ցուցադրության էր հանվել գնդի մարտական տեխնիկան:

Ըստ գնդի հրամանատարի՝ բանակաշինության դժվարին փուլն արդեն անցյալում է, հիմա ամենօրյա աշխատանք է տարվում մարտունակության կատարելագործման նպատակով: **«Անցնելով թե՛ պատերազմի եւ թե՛ բանակաշինության ծանրագույն փորձությունները՝ մեր գունդը կոփվեց եւ կարճ ժամանակում դարձավ ՀՀ ԶՈՒ լավագույն գնդերից մեկը»,** – ասում է գնդապետ Ալեքսանդր Ցականյանը:

Պատերազմում հաղթեցինք՝ թիկունքում ունենալով խաղաղ ապրել ցանկացող ժողովրդի աջակցությունը: Կամավորական ջոկատների հենքի վրա ամրացած գունդն այսօր 70 կմ երկարությամբ սահման է պահում՝ ապահովելով խաղաղ այգաբացերը:

«Մենք այլընտրանք չունեինք: Մենք պարտավոր էինք ունենալ մարտունակ բանակ, պաշտպանելու մեր երկրի սահմանները, ազատագրելու մեր պապական հողերը, պահպանելու մեր ազգային ինքնությունը, վերհաստատելու մեր լինելության իրավունքը», – նշեց Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը:

Սիսիանի կամավորականներն այնտեղ էին, որտեղ իրավիճակն ավելի լարված էր, փրկության ելքը՝ անորոշ: Բանիմաց հրամանատարների ղեկավարությամբ տղաները թեժ մարտերից հաղթող էին դուրս գալիս: Ըստ ազատամարտիկ Նեկտար Օհանյանի՝ արյամբ ամրացած հայոց հողը չսիրել պարզապես հնարավոր չէ: **«Այն անառիկ բարձունքները, որ դուք պաշտպանում եք զոր ու գիշեր, ձեռք են բերվել հերոսների արյան գնով, հերոսներ, որոնց ոգին ձեր կողքին է: Սիրելի՛ զինվորներ, պետք է հայրենիքը սիրել անկաշառ սիրով, որովհետեւ նա մերն է, եւ այդ մենք ենք: Թող հայոց երկնակամարը միշտ լինի կապույտ, երկիրը՝ խաղաղ»,** – նշեց ազատամարտիկը:

Հովիկ Ազոյան, գնդի հիմնադիր հրամանատար

Օրը լի է շնորհավորանքներով. ելույթ ունեցողները նախ շնորհավորում են հայոց աշխարհի մայրերին մարտի 8-ի կապակցությամբ: Օրվա առիթով մի խումբ զինվորականներ պատվոգրերի, շնորհակալագրերի, արժեքավոր նվերների ու շքանշանների արժանացան:

Միջոցառումն իրենց գեղեցիկ պարով եզրափակեցին «Գրանտ» պարային համույթի եւ Սիսիանի արվեստի դպրոցի սաները: Ներկաները հնարավորություն ունեցան համտեսել նաեւ զինվորականների պատրաստած ճաշը:

Զոհերի ու զրկանքների գնով ձեռք բերված խաղաղությունը հարատեւ է, քանի որ սահմանին կանգնած զինվորը լավ է գիտակցում իր առաքելությունը: Սիսիանի՝ փառահեղ մարտական ուղի անցած գունդը ծրարեց մեկ կարեւոր իրադարձություն եւս. նա 20 տարեկան է:

ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Հանրապետության ոստիկանապետը՝ Սյունիքում

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

թմրանյութը ձեզ չի վերաբերում, սակայն այստեղ նստած, չեք հասկանալու, թե ոնց ձեր զավակը թմրամոլ դարձավ, կործանվեց: Զավակների հարցում իմը եւ քոնը չեն լինում...»:

Անդրադառնալով առաջնահերթ մյուս խնդիրներին՝ Վ.Գասպարյանը փաստեց, որ ոստիկանության մարտավարությունն ուղղված է անչափահասների՝ հասարակության լիարժեք քաղաքացի դարձնելու խնդրին: Անչափահասների շրջանում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ոստիկանապետի հրամանով Սյունիքի մարզի հինգ ավագ դպրոցում կլինեն ոստիկանության աշխատակիցների հաստիքներ:

Համայնքի ղեկավարներին ուղղված իր խոսքում ոստիկանապետն ընդգծեց, որ կան գյուղապետեր, ովքեր օրենքով նախատեսված գործողությունները կատարում են անօրինական ճանապարհով եւ համոզմունք հայտնեց, որ որոշ հարցերում պատրաստակամ են իրավական աջակցություն ցուցաբերել համայնքի ղեկավարներին. **«Իսկ եթե կան որոշակի շեղումներ, ողջ պատասխանատվությամբ հայտարարում եմ, պատրաստ ենք խոնարհությամբ օգնել, կանգնել նրանց կողքին, շտկել»:**

Խորհրդակցության ժամանակ խոսվեց նաեւ անօրինական զենք-զինամթերքը կամավոր հանձնելու մասին, որոնց տերերը նման դեպքում կազատվեն քրեական պատասխանատվությունից: Ընդսմին ելույթ ունեցողը հիշեցրեց մեր պապերի խոսքը, թե պատից կախված հրացանն էլ է տարին մեկ անգամ կրակում: Այս համատեքստում բանախոսն այն միտքը հայտնեց, որ հասարակությունը կարող է առաջընթաց ապրել այն դեպքում, երբ արդարությունը, կարգուկանոնը, երբ օրենքն ու օրինականությունը գնում են հասարակության առջեւից, հակառակ պարագայում հասարակությունը թեւաթափ եւ հուսահատ վիճակում կհայտնվի եւ կշարունակի այդպիսին մնալ: Այնուհետեւ հիշեցնելով հայտնի ֆիլմի («Հանդիպման վայրը փոխել չի կարելի»)՝ նույնքան հայտնի դարձվածքը, Վլադիմիր Գասպարյանը փաստեց. **«Գողը, հանցագործը, սրիկան, տականքը պետք է նստեն, եւ դուք այնքան հետեւողական պետք է լինեք, որ ամբողջ պրոցեսներն անցնելով՝ օրինախախտը դատարանի դահլիճից հանկարծ դուրս չգա: Հետեւողականության, ձեր արած գործի վերջնական գնահատականը տրվում է դատարանում: Մենք այն մասնագիտության տեր մարդիկ ենք, որ 24 ժամ մեր հիմնարկների դռները եւ մեր հոգու դռները պիտի բաց լինեն քաղաքացու առաջ: Եթե փակեցինք ոստիկանության դռները եւ կողպեցինք մեր հոգիները յոթ փականքի տակ, վայ մեր ժողովրդին եւ վայ էդ ոստիկանին»:** Որպես նորություն ոստիկանապետը հայտնեց, որ տարվա կեսին ոստիկանությունը նոր համազգեստ է կրելու. **«Երեւի շտապողականության պատճառն այն է, որ նոր համազգեստի մեջ ցանկանում ենք տեսնել նոր ոստիկանի, ինչպես Սուրբ գրքում է ասված՝ հին գինին՝ հին տիկերում, նոր գինին՝ նոր տիկերում. ասելս այն է, որ նորացված ոստիկանին ուզում ենք տեսնել նոր համազգեստի մեջ»:**

Խորհրդակցության մասնակիցներից ելույթ ունեցողներ չեղան: Միայն Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը հանդես եկավ Քաջարանի ոստիկանության բաժանմունքը բաժնի վերակազմավորելու առաջարկությամբ: Վլադիմիր Գասպարյանը տեղեկացրեց, որ բարձրացված հարցին դրական լուծում կտրվի: Ոստիկանապետն Արցախյան ազատամարտի մասնակցության եւ մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում աջակցության համար Քաջարանի համայնքի ղեկավարի կողմից արժանացավ հուշամեդալի:

Շնորհակալություն հայտնելով Սյունիքի մարզի հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի համար՝ մարզպետ Վահե Հակոբյանը Վլադիմիր Գասպարյանին նվիրեց Խուստուփի բնապատկերով գեղանկար: Վերջինս էլ պարտքի տակ չմնաց՝ մարզպետին հանձնելով ոստիկանի զինանշանով կրծքանշան:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Գորիսի քաղաքապետի ընտրությունը՝ հունիսի 8-ին

Օրակարգ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

դաբար ձեւավորվում է ընտրական ինը տեղամաս:

Գորիսի քաղաքապետի ընտրությունը 2014թ. սյունիքյան քաղաքական երկու խոշոր իրադարձությունից մեկն է: Առաջին նշանակալից իրադարձությունը կլինի իշխող ՀՀԿ-ի տարածքային եւ շրջանային կազմակերպությունների ղեկավար մարմինների ընտրությունը, որ տեղի կունենա առաջիկա օրերին՝ ՀՀԿ հերթական համագումարի նախօրեին:

Ինչ վերաբերում է Գորիսի քաղաքապետի ընտրության շուրջ ասեկոսեներին, ինչի մասին պալատական միջանցքներից հայտնի ծպտյալներն են վաղաժամ ծնծղաներ հնչեցնում, ապա կարող ենք ասել՝ իրավիճակը Գորիսում ավելի քան խաղաղ է, Գորիսն ապրում է իր առօրյայով եւ, ամենակարեւորը, Գորիսն անկաղնի բացատ չէ, որտեղ մացառը կարող է գլուխ բարձրացնել, եթե նույնիսկ այդ թփաբույսի տակ շատ պարարտանյութ եւ ջուր լցվի: Ի վերջո, Գորիսում լիդեր, անհատականություն ծնվում են եւ ոչ թե նշանակվում, ընտրվում կամ պատվաստվում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Լուրեր

Մարտի 4-ին Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում «Կապան» քաղաքացիական շարժման նախաձեռնությամբ հանդիսատեսի ուշադրությանը ներկայացվեց «Հայաստանի կոտրվող ողնաշարը» բնապահպանական-փաստագրական տեսաֆիլմը, որը նկարահանել է Հայաստանի բնապահպանական ճակատը (ՀԲճ): Ֆիլմը ներկայացնում է Հայաստանում, մասնավորապես՝ Սյունիքում, հանքարդյունաբերական ձեռնարկությունների շահագործման հետեւանքով առաջացած բնապահպանական, առողջապահական, իրավական եւ սոցիալական խնդիրները: Ֆիլմի ցուցադրությունից հետո ներկաները հրավիրվեցին մասնակցելու հիմնախնդրի քննարկմանը:

Փետրվարի 27-28-ին ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնությամբ Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցավ սեմինար-դասընթաց, որը նպատակ ուներ մասնակիցներին ծանոթացնել գանձապետական համակարգի բարեփոխումներին: Մարտի 10-ին Կապանում եւ Սիսիանում լուծարվել են տեղական գանձապետարանները, եւ համայնքների գանձապետական հաշիվներն այլեւս չեն սպասարկվի տեղական գանձապետական հաշվի կողմից: Կփոխվի փաստաթղթերի ներկայացման կարգը: Նախկին թղթային տարբերակից անցում կկատարվի էլեկտրոնային եղանակին: Համակարգը գործում է 2011 թվականից: Անցյալ տարի հանրապետությունում լուծարվել է 7, իսկ այս տարվա փետրվարին՝ 10 տեղական գանձապետարան: Գործընթացը կավարտվի մայիսին:

Մարտի 7-ին, կանանց միջազգային օրվա կապակցությամբ, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանն այցելեց Հայրենական մեծ պատերազմի վետերան, ազգությամբ ռուս Մարինա Մատուշեւսկայային, ով արդեն 60 տարի ապրում է Կապանում: Տիկին Մատուշեւսկայան ծնվել է Ղրիմի Սիմֆերոպոլ քաղաքում, վաղ տարիքում ընտանիքի հետ տեղափոխվել այն ժամանակ Լենինգրադից 15 կմ հեռավորության վրա գտնվող Օլգինա երկաթուղային կայարանի ավան: Դպրոցն ավարտելուց հետո գործուղվել է Երեւան, որտեղ մեկ տարի աշխատելուց հետո տեղափոխվել է Կապան, աշխատել Կապանի պահածոների գործարանում: Քաղաքապետը ծաղիկներ եւ դրամական պարգեւ շնորհեց վետերանին՝ ցանկանալով նրան առողջություն եւ խաղաղ կյանք:

Մարտի 9-ին Սյունիքի մարզի յոթ համայնքում անցկացվեց տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություն: Ալվանք համայնքի ղեկավար ընտրվեց Վարուժան Թումանյանը: Առաջադրված երկու թեկնածուից Եղեգ համայնքի ղեկավար ընտրվեց Վյաչեսլավ Մարկոսյանը: Նռնաձորի գյուղապետ ընտրվեց Մկրտիչ Մկրտչյանը, ով ստացավ 58 ձայն, իսկ Լեհվազի գյուղապետ՝ Սասուն Զաքարյանը, Վարդանիձորի գյուղապետ՝ Ալբերտ Բեկլարյանը, Նժդեհ համայնքի ղեկավար՝ Գեղամ Օհանյանը, իսկ Տորունիք համայնքի ղեկավարի ընտրության արդյունքում քվեարկությանը մասնակցած 59 ընտրողից 56-ն իրենց ձայնը տվեցին միակ թեկնածուին՝ Անահիտ Հակոբյանին:

ԱՐՄԵՆ ԱՖԱՆԴՅԱՆ. «Յուրաքանչյուրը պիտի համոզվի, որ ինքն օրենքով պաշտպանված է»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Սյունիքի մարզի դատախազ Արմեն Աֆանդյանը

Հարգազրույց համարին

– Պարոն Աֆանդյան, մեր թերթի այս տարվա փետրվարի 15-ի համարում «Սյունիք. գործող անձինք» խորագրի ներքո ներկայացվել էր ձեր այցեքարտ-կենսագրականը: Բնականաբար, սա Ձեր անդրանիկ հանդիպումը չէ ընթերցողի հետ, ուստի որպես մեր զրույցի նախաբան՝ կուզեինք ներկայացնել մարզի քրեածին իրավիճակը:

– Նախ՝ շնորհակալ եմ մեր կառույցով հետաքրքրվելու համար: Իրավիճակը մարզում բավարար եմ համարում, քանի որ արտառոց, ծանր, հասարակական հնչեղություն ունեցող դեպքեր չեն արձանագրվել: Չորրորդ ամիսն է, ինչ ղեկավարում եմ Սյունիքի մարզային դատախազությունը, կնշանակի ծանոթ եմ մարզի օպերատիվ իրավիճակին, եւ դժվար է առանձնացնել մի հանցատեսակ, որ առավել տարածված է Սյունիքում: Որպես կանոն՝ գերակշռում են հիմնականում մարմնական վնասվածքներով, երբեմն մահվամբ ավարտվող ճանապարհատրանսպորտային պատահարները:

– Ձեր պաշտոնավարումից հետո կադրային փոփոխություններ եղե՞լ են, թե՞ նախընտրում եք առկա կադրերով ղեկավարել մարզային դատախազությունը: Ինչպե՞ս կգնահատեիք նրա կադրային ռեսուրսը:

– Սյունիքի մարզային դատախազության կադրային ռեսուրսն այսօրվա դրությամբ բավարար է: Կադրերին ներկայացվող պահանջներից են, որը կարեւորում է նաեւ գլխավոր դատախազ Գեւորգ Կոստանյանը, պրոֆեսիոնալիզմը, նվիրվածությունը եւ անկաշառ լինելը: Կարծում եմ՝ այդ ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկել ենք, ովքեր կպահպանեն այդ պահանջները, կմնան եւ կաշխատեն: Կադրային քաղաքականության հարցում իմ պաշտոնավարումից հետո «ցնցումներ» չեն եղել. երկու աշխատակից տեղափոխվել է, բայց ոչ թե ուրիշ տեղ, այլ մեր համակարգում այլ աշխատանքի:

– Իսկ բացթողումներ նկատե՞լ եք այս մի քանի ամսվա ընթացքում:

– Համակարգը երկար տարիներով ճանապարհ անցած, հղկված համակարգ է, մարզային դատախազության ընդհանուր աշխատանքը բավարար կարելի է համարել: Խնդիրն այն է, որ էլ ավելի պիտի փորձենք ժողովրդի վստահությունը վերականգնել դատախազական համակարգի հանդեպ: Մեր առաքելությունը հենց պատշաճ միջոցներ ձեռնարկելն է, որ յուրաքանչյուր քաղաքացի գիտակցի եւ համոզվի, թե ինքն անպաշտպան չէ. եթե նա տուժել է որեւէ մեկի, այդ թվում պաշտոնատար անձի գործողությունների հետեւանքով, օրենքով պաշտպանված է: Այլ կերպ ասած՝ մարդկանց մեջ պիտի արմատավորվի այն մտայնությունը, որ օրենքի առջեւ բոլորը հավասար են՝ անկախ պաշտոնից, դիրքից եւ այլ հանգամանքներից: Բայց որպես մարզի դատախազ՝ պիտի ասեմ, որ երեւույթներ կան, որոնց դրսեւորումները մշտապես մեր տեսադաշտում են լինելու. խոսքը կոռուպցիոն դրսեւորումների մասին է:

– Ներող կլինեք ընդհատելու համար, ուզում եմ մի քիչ հանգամանորեն լուսաբանեք կոռուպցիա հասկացությունը: Այն ժողովուրդը մակերեսորեն եւ միակողմանիորեն է ընկալում՝ հասկացության իմաստը նեղացնելով եւ մասնավորապես այն շփոթելով սոսկ կաշառք տալու եւ վերցնելու հետ: Ըստ իս՝ կոռուպցիան շատ ավելի լայն հասկացություն է, քան մարդիկ պատկերացնում են:

– Ճիշտ եք նկատել: Ցավոք, ժողովրդի մեջ ձեւավորված է այն թյուր կարծիքը, որ կոռուպցիան պաշտոնյային կաշառք տալն է եւ նրա կողմից կաշառք վերցնելը: Կոռուպցիոն հանցատեսակների շրջանակն ավելի լայն է: Պետական, տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող անձի կողմից դրսեւորած յուրաքանչյուր հովանավորչություն իր մեջ կարող է պարունակել կոռուպցիոն երեւույթներ, այդ թվում՝ պաշտոնեական դիրքը չարաշահելը, ծառայողական պարտականությունները չկատարելը, կամ վերջիններիս կողմից այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են նրանց լիազորությունների շրջանակից եւ այլն: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում 30-ից ավելի հոդվածներ կան, որոնք դասվում են կոռուպցիոն հանցագործությունների շարքին:

– Նաեւ ուզում ենք իմանալ, թե ինչ քաղաքականություն եք որդեգրել լրատվամիջոցների հանդեպ: Հարցս ինքնանպատակ չէ: Սյունիքի դատախազներից մեկն իր պաշտոնավարման հինգ-վեց տարվա ընթացքում այդպես էլ իրեն հեռու պահեց մարզային լրատվամիջոցներից:

– Երբ նոր սկսեցի պաշտոնավարել Սյունիքում, առիթ եղավ հանդես գալ տեղական հեռուստատեսությամբ: Այս անգամ էլ դիրքորոշումս խնդրո առարկայի առնչությամբ հայտնում եմ մարզային թերթի ընթերցողներին: Հասարակությունից ոչ մի բան չունենք թաքցնելու, որդեգրել ենք թափանցիկ աշխատաոճը, հետեւապես որեւէ քրեական գործի վերաբերյալ ոչ տեղեկատվություն թաքցնելու իմաստն ենք տեսնում, ոչ էլ ցանկություն ունենք: Այլ խնդիր է, որ առանձին դեպքերում, զուտ նաեւ պայմանավորված նախաքննական գաղտնիքի հրապարակման չափորոշիչներով, քրեական գործի մասին չենք կարող տրամադրել այն տեղեկատվությունը, որը, ենթադրենք, թերթը կամ ընթերցողն ակնկալում է: Քանզի ոմանք այն թյուրըմբռնումն ունեն, թե երբ դեպքն արձանագրվել է, այսինքն՝ այդ պահին ինչ որ հայտնի է, իրավապահ մարմինները հանրությանը պիտի իրազեկեն: Ասեմ, որ դա բնավ էլ այդպես չէ, որովհետեւ նախեւառաջ կխախտվեն նախաքննության գաղտնիության սկզբունքը, անմեղության կանխավարկածի սկզբունքը, այլեւս չխոսելով այն մասին, որ դա կարող է բացասաբար ազդել նախաքննության ելքի վրա: Բացի այդ՝ լինում են քրեական գործեր, որոնց դեպքում, եթե հայտնենք բոլոր կասկածյալների անունները, ապա նրանցից մեկը կարող է թաքնվել քննությունից՝ ասենք՝ դիմելով փախուստի, ինչը խոչընդոտներ կստեղծի քրեական գործի քննության համար: Եկեք չմոռանանք անմեղության կանխավարկածի սկզբունքի մասին: Եթե քրեական գործ է հարուցվել, դեռեւս չենք կարող ասել, որ տվյալ պաշտոնատար անձը մեղավոր է, հանցանք է կատարել եւ այլն, եւ այլն: Մենք նման հետեւություն կարող ենք անել միայն այն դեպքում, երբ վկայակոչված գործերը մեղադրական եզրակացությամբ կմտնեն դատարան եւ ավելին՝ դատարանի կողմից մեղադրական դատավճիռ կկայացվի: Այսինքն՝ ըստ էության այդ դեպքում կարելի է ասել, որ պաշտոնատար անձն օրենքի խախտում է թույլ տվել:

– Վերջերս խոշոր գողություն կատարվեց «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲ ընկերությունում: Գործն ի՞նչ ընթացք է ստացել:

– Նշեմ, որ արձանագրվել է նման դեպք՝ կատարվել է 36 հազար դոլար արժողությամբ տարբեր տեսակի սարքավորումների հափշտակություն, քրեական գործ է հարուցվել, այս պահին քննություն է ընթանում:

– Պարոն Աֆանդյան, ամիսներ առաջ Սյունիքի մարզի դատախազությունը պատրաստեց մամուլի հաղորդագրություն այն մասին, որ Սիսիանի քաղաքապետարանում կատարված վարչական հսկողության արդյունքների, ինչպես նաեւ Սյունիքի մարզի քննչական բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա հարուցվել է քրեական գործ: Ո՞ր փուլում է այդ գործի նախաքննությունը, եւ նախնական ի՞նչ արդյունքներ է արձանագրել նախաքննական մարմինը:

– Իրավացի եք, մարզպետարանի կողմից Սիսիանի քաղաքապետարանում իրականացված վարչական հսկողության արդյունքում որոշակի խախտումներ արձանագրելու դեպքի առթիվ Սյունիքի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի եւ 314-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ եւ կատարվում է նախաքննություն: Նշված քրեական գործի ժամկետների ձգձգման պատճառը պայմանավորված է նրանով, որ անհրաժեշտ են հատուկ բնագավառի մասնագիտացված գիտելիքներ (շինարարական, հաշվապահական) եւ կատարվում են ստուգումներ, նշանակվել են որոշ փորձաքննություններ: Բայց, կարծում եմ, շուտով այդ գործի ամբողջ պատկերը կունենանք, ու համապատասխան գնահատականներ կտրվեն:

– Ըստ Կապանում շրջանառվող խոսակցությունների՝ Կապանի կոմունալ տնտեսությունում տեղ են գտել մի շարք իրավախախտումներ, որոնց առիթով հարուցվել է քրեական գործ եւ կատարվում է նախաքննություն: Արդյոք դա համապատասխանո՞ւմ է իրականությանը, իսկապե՞ս հարուցվել է քրեական գործ եւ քրեական օրենսգրքի ո՞ր հատկանիշներով:

– Իրոք, Կապանի կոմունալ ծառայության գործունեության հետ կապված քրեական գործ հարուցվել է, ընդ որում տվյալ քրեական գործի հարուցման առիթ է հանդիսացել զանգվածային լրատվամիջոցում տեղ գտած հրապարակումը: 2013թ. դեկտեմբերին aravot.am կայքում հաղորդագրություն էր տարածված, թե Կապանի բնակիչները բողոքում են՝ քաղաքի փողոցներն ու մայթերը մաքրված չլինելու համար, որի պատճառով բազմաթիվ քաղաքացիները վնասվածքներ են ստացել: Այս հաղորդումն է առիթ եղել, որ հանձնարարվել է նախապատրաստել նյութեր եւ հարուցվել է քրեական գործ՝ պաշտոնեական անփութության հատկանիշներով: Ընդ որում՝ շատերի մեջ այն պատկերացումն է, որ եթե քրեական գործ է հարուցվում, անպատճառ պիտի մարդիկ կալանավորվեն, մեղադրանքներ առաջադրվեն եւ այլն: Հաղորդումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում քննիչն ու հետաքննիչը պիտի որոշումներ կայացնեն՝ կամ քրեական գործ հարուցեն, կամ մերժեն քրեական գործի հարուցումը, եւ առանձին դեպքերում այդ տասնօրյա ժամկետում հնարավոր չէ վերջնական եզրակացություն տալ, հետեւաբար, քրեական գործ կարող է հարուցվել՝ ենթադրաբար կատարված հանցագործության դեպքերը հայտնաբերելու կամ հերքելու համար: Նշված քրեական գործի քննությունը ընթացքի մեջ է:

– Նմանատիպ ասեկոսեներ են շրջանառվում Գորիսի քաղաքապետարանի շուրջ: Արդյո՞ք քրեական գործ է հարուցվել Գորիսի քաղաքապետարանում տեղ գտած ինչ-ինչ իրավախախտումների առիթով:

– Ասեմ, որ Գորիսի քաղաքապետարանի հետ կապված հարուցվել է ոչ թե մեկ, այլ երկու քրգործ: Մեկը վերաբերում է քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող անշարժ գույքերի վաճառքի ընթացքում

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 5

Լուրեր

Ըստ aravot.am-ի՝ Իրանի հետ սահմանամերձ հայկական բնակավայրերում գազի բաշխման ցանց կառուցելու համար արդեն քանի տարի է նախագծման աշխատանքներ են ընթանում: Կառավարության եկող նիստում, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը վարչապետին կտեղեկացնի, որ այդ աշխատանքներն ավարտվել են եւ այս տարվա բյուջեում ծրագիրը ներառելու համար անհրաժեշտ է, որպեսզի փոփոխություններ եւ լրացումներ կատարվեն կառավարության 2013 թվականի N 1414-Ն որոշման մեջ: Ինչպես տեղեկանում ենք նիստի օրակարգից, 2011թ. Իրանի եւ Հայաստանի միջեւ ստորագրված փոխըմբռնման հուշագրով, համաձայն որի Իրանը 2 միլիոն դոլար դրամաշնորհ է տրամադրել՝ Մեղրի եւ Ագարակ համայնքներում գազի բաշխման ցանց կառուցելու համար, մեր երկիրը պարտավորվել է իր վրա վերցնել հուշագրի շրջանակներում տրամադրվող միջոցների հաշվին ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման եւ ապրանքների ներմուծման գործարքներից գանձվող հարկերի, մաքսատուրքերի եւ այլ պարտադիր վճարների հետ կապված ծախսերը: Ըստ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարի՝ նախագծման աշխատանքներն ավարտելուց հետո ճշգրտվել են ներմուծվող ապրանքների ցանկերն ու քանակները, ինչպես նաեւ՝ աշխատանքների ծավալները:

Բուլղարական «Литературенсвят» («Գրական աշխարհ») էլեկտրոնային հեղինակավոր ամսագիրը (տես՝ www.literaturensviat.com. կայքէջը) 2014-ի մարտյան թողարկման մեջ «Духовновъплъщение» («ՈԳԵՂԵՆ ՄԱՐՄՆԱՑՈՒՄ») խորագրի ներքո հրապարակել է Գագիկ Դավթյանի բանաստեղծությունների ծավալուն շարքը բանաստեղծի լուսանկարով եւ կենսագրական տեղեկություններով: Շարքը ռուսերենից թարգմանել է անվանի բանաստեղծ եւ գեղանկարիչ, «Պոեզիա» անվանակարգում Բուլղարիայի ազգային մրցանակի դափնեկիր Ռոման Կիսյովը, ում ստեղծագործությունները թարգմանված են շուրջ երկու տասնյակ լեզուներով, այդ թվում՝ առանձին գրքերով՝ խորվաթերեն, մակեդոներեն, բենգալերեն: Հիշեցնենք, որ պոեզիայի միջազգային բազմաթիվ փառատոների մասնակից բուլղար բանաստեղծն Ադրբեջանում հայտարարված է անցանկալի անձ («persona non grata»)՝ 2012-ին պոեզիայի Արցախյան առաջին միջազգային փառատոնին մասնակցելու համար:

Մարտի 18-19-ին Սիսիանում, Գորիսում, Կապանում, Քաջարանում, Մեղրիում եւ Բերձորում տեղի են ունեցել ԵԿՄ տեղական կառույցների հավաքներ՝ ԵԿՄ վարչության անդամ, միության մարզային կառույցի ղեկավար Սուրեն Խաչատրյանի մասնակցությամբ: ԵԿՄ վերջին համագումարի մասին հանգամանալից տեղեկատվություն տալուց բացի՝ ժողովներում նորացվել են շրջանային կազմակերպությունների ղեկավար կազմերը:

Մարտի 19-ին վերաբացվել է Շինուհայրի համայնքային կենտրոնի վերանորոգված շենքը: Կենտրոնի հիմնանորոգումն ու կահավորումն իրականացվել է միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցով ու համայնքի ներդրմամբ:

«Հայոց արծիվների» 3-րդ համագումարը

Մարշալ Բաղրամյանի անվան զորավարժարանի հրաձգարան

Հասարակություն

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

րական հասարակական կազմակերպության 3-րդ համագումարը հրավիրվել է հայոց պետականության ու հայ ժողովրդի համար բախտորոշ ու էվոլյուցիոն զարգացումներով հարուստ պատմական ժամանակաշրջանում, երբ ընդունվում են վճռորոշ ու ապագային միտված համապետական կարեւոր օրենքներ ու որոշումներ: Չնայած ներքին ու արտաքին մարտահրավերներին՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին վերջին վեց տարվա ընթացքում հաջողվեց ապահովել հայոց պետականության բնականոն զարգացումն ու գործունեությունը, խոսքի ու մամուլի ազատության բարձր մակարդակ, ժողովրդավարական ու հասարակական շարժումների ակտիվացում եւ ընդդիմադիր ուժերի անարգել ու օրինական մասնակցություն համապետական որոշումների քննարկմանն ու ընդունմանը: Հասարակական լայնամասշտաբ քաղաքացիական շարժումների գոյության փաստը հանրապետության նախագահի անդուլ ու տքնաջան գործունեության արդյունք է: Հայոց նախագահի բարձր հովանու եւ ուշադրության ներքո օրեցօր հզորանում են պետական ու հասարակական կառույցները, ամրապնդվում կուսակցություններն ու հասարակական շարժումները, հաստատվում բազմակարծության եւ մարդու համակողմանի ազատությունների մթնոլորտ»:

- Մենք՝ հայերս, հինգ հազարամյա պատմություն ունեցող ժողովուրդ ենք եւ մեր բոլոր պատմական ու տարածքային կորուստները տեղի են ունեցել այն ժամանակ, երբ կորցրել ենք մեր միասնությունը, պետականությունն ու պայքարի ոգին, - շարունակեց «Հայոց արծիվների» առաջնորդը:

Խաչիկ Ասրյանը կոչով դիմեց համագումարի պատվիրակներին. **«Նոր պատմական մարտահրավերներին ընդառաջ պետք է ավելի սերտ համախմբվենք մեր պետականության, հայոց նախագահի եւ հայոց ազգային բանակի շուրջ՝ հանուն մեր հաղթական ու ինքնիշխան հարատեւության: «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության գլխավոր նպատակը եղել եւ մնում է անմնացորդ նվիրումն ու անդավաճան ծառայությունը հայոց պետականությանն ու հայ ժողովրդին, հայոց բանակին ու հայրենիքի պաշտպանունակությանը, յուրաքանչյուր հայ ընտանիքին եւ սահմանապահ հայի օջախին»:**

Համագումարում ողջույնի ու գնահատանքի խոսքով հանդես եկավ ՀՀ պաշտպանության նախարար, Արցախի հերոս Սեյրան Օհանյանը, ով անթաքույց հիացմունքով գնահատեց կազմակերպության ռազմահայրենասիրական գործունեությունն ու ասաց. **«Յուրաքանչյուր հասարակական կազմակերպության գործունեության հիմքում ընկած է գաղափարական հենքի ստեղծումը, որի հիմնական նպատակն է մեր երկրի հուսալի ապագայի համար պայքարելու ձգտումը: Այդպիսի գործունեություն է ծավալել «Հայոց արծիվներ» կազմակերպությունը, որի ակտիվությունը, անցկացրած միջոցառումները եւ լարված աշխատանքն աննախադեպ են: Աննախադեպ է նաեւ այսօրվա համագումարը: Կազմակերպության գործունեությունն արժանի է մեր ժողովրդի բարձր գնահատականին, որովհետեւ այն նպաստում է մեր պետականության ամրապնդմանը, մեր պաշտպանության հզորացմանը եւ ռազմահայրենասիրական ոգու դաստիարակությանը: Ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ կատարվող մեծամասշտաբ աշխատանքները նպաստում են ոչ միայն բանակի, այլեւ մեր երիտասարդության շրջանում հայրենասիրական վսեմ գաղափարների հաստատմանը»:**

«Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության 3-րդ համագումարում ողջույնի ու բարեմաղթանքի խոսք ասաց ԼՂՀ պաշտպանության նախարար-ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենատ Մովսես Հակոբյանը. **«Կազմակերպությունն իրականացնում է բազմաթիվ ծրագրեր: Ուրախալի է, որ «Հայոց արծիվները» իր շարքերում միավորում է երիտասարդության առավել ակտիվ հատվածին՝ նրանց եռանդն ուղղելով ճիշտ նպատակների: Կազմակերպության անդամներից շատերը համալրելու են բանակի շարքերը: Վստահ եմ, որ այդ երիտասարդներին ներարկված գաղափարները, նրանց ձեռք բերած ռազմամարզական որոշակի հմտությունները նպաստելու են, որ նրանք դառնան օրինակելի զինվորներ, հայրենիքի արժանավոր պաշտպաններ: Վստահ եմ նաեւ, որ հայրենիքին սպառնացող յուրաքանչյուր վտանգի դեպքում «Հայոց արծիվները» կանգնելու է բանակի կողքին»:**

Համագումարում ելույթ ունեցավ «Այունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը, ով բարձր գնահատելով կազմակերպության գործունեությունը՝ ասաց. **«««Հայոց արծիվներ» կազմակերպության ղեկավարությանը հաջողվեց (ժողովներից, համագումարներից, ճառերից հոգնած մեր օրերում) կազմակերպության հերթական համաժողովն անցկացնել նախօրինակը չունեցող ձեւաչափով, որը ոչ միայն հետաքրքիր ու գրավիչ դարձրեց այն, այլեւ համաժողովին հաղորդեց գործնական ուղղվածություն՝ հատկապես ռազմահայրենասիրական առումով: Եվ այսօր, ի դեմս «Հայոց արծիվների», հանրապետությունում ունենք լիովին կազմավորված ու կայացած, հանրության ամենատարբեր շերտերում արմատներ ձգած, յուրօրինակ ծրագիր ու գործելակերպ որդեգրած հասարակական կազմակերպություն»:** Սամվել Ալեքսանյանը նշեց նաեւ. **«Ուզում ենք մեր հարգանքն ընծայել Խաչիկ Ասրյանին: «Հայոց արծիվներ» հասարակական կազմակերպության ծնունդն ու կայացած լինելու իրողությունը գլխավորապես նրա մտքի, ջանքի, անմնացորդ նվիրումի արգասիքն են: Բնատուր օժտվածություն, լիդերի անուրանալի ձիրք, երիտասարդներին ոտքի հանելու եւ առաջնորդելու ունակություն, դժվարին իրավիճակներում կողմնորոշվելու, չհուսալքվելու եւ առաջադրված խնդիրը լուծելու կամք ու վճռականություն, մարդկանց հետ շփվելու, նրանց մտածումներին կարեկից ու հաղորդակից լինելու շնորհ, – ահա բնութագրիչներից մի քանիսը, որ հատուկ է Խաչիկ Ասրյանին: Եվ պատահական չէ ամենեւին, որ մեր ընթացքի բազմաթիվ ուղղություններում ու տարածաշրջաններում սպասված գործչի ու կազմակերպչի վաստակած համարում ունի նա»:**

ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը

Խաչիկ Ասրյան, «Հայոց արծիվներ» ՀՀԿ նախագահ

Իր խոսքի ավարտին Սամվել Ալեքսանյանն ասաց՝ **«Ակնկալում ենք, որ կազմակերպությունը, սկզբնավորման-ձեւավորման փուլին բնորոշ դժվարությունն ու դրսեւորումները հետեւում թողած, անցողիկի ու ժամանակավորի բեռը թոթափած, հանրությանը կներկայանա շյուղահարվող մեր օրերի մարտահրավերների հստակ գիտակցումով ու դրանից բխող գործելակերպով: Այլապես՝ մեր հասարակական-քաղաքական ուժերից շատերին համակած անորոշությունն ու իրականությունից կտրվածությունը, նրանց անժողովուրդ ընթացքն ու մերկությունը մի օր էլ կարող է ձեզ սպառնալ: Ուրեմն եւ՝ «Հայոց արծիվներին» ողջամիտ, ստեղծագործ ու անվախճան երթ, երկրի տիրոջ զգացողություն, իսկ դրանից առաջ՝ երկրի ջրկիրն ու հողվորը, մեր քարափների անվախճանության երաշխավորն ու արթուն պահապանը լինելու զգացողություն, պատվախնդրություն, վարք: Եվ միայն այդ դեպքում ձեր ճախրանքը մերը կլինի, բոլորինս եւ յուրաքանչյուրինս կլինի, հայերեն կլինի, ինչը եւ սպասում ենք ձեզանից»:**

Համագումարը միաձայն «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության նախագահ վերընտրեց Խաչիկ Ասրյանին, ով իր ամփոփիչ խոսքում նախանշեց «Հայոց արծիվների» գործունեության հիմնական նպատակներն ու խնդիրները:

Առաջին՝ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունն այսուհետ եւս նպաստելու է ՀՀ օրենքների եւ պետականամետ, հայրենապաշտ գաղափարների անշեղ ու համակողմանի իրականացմանը:

Երկրորդ՝ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունը մեծ եռանդով շարունակելու է համագործակցությունը պետական գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների եւ զանգվածային լրատվամիջոցների հետ՝ հանուն օրինականության, ժողովրդավարության, հանուն համայնքների զարգացման ու սահմանամերձ գյուղերի ամրապնդման եւ հանուն Հայաստանի քաղաքացիների բարեկեցության:

Երրորդ՝ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունը անդուլ պայքար է մղելու կոռուպցիայի, այդ թվում կաշառակերության ու պրոտեկցիոնիզմի դեմ:

Չորրորդ՝ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունը կշարունակի եւ կընդլայնի համագործակցությունը հայոց ազգային բանակի հետ՝ հանուն ազգային բանակի անընդհատ հզորացման եւ մեր հայրենիքի պաշտպանունակության բարձրացման: Այդ նպատակով նոր թափ կառնեն այցելությունները զորամասեր, սահմանագծի մարտական հենակետեր եւ հայրենիքի սահմանները պաշտպանող սպաներին, պայմանագրային զինծառայողներին, զինվորներին, Արցախյան հերոսամարտի վետերաններին ու նրանց ընտանիքիներին:

Հինգերորդ՝ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունը հայկական բարձրավանդակում գործող ամենամասսայական, ազգային-պետական-հայրենասիրական գաղափարներով առաջնորդվող հայրենասիրական շարժումն է, եւ մեր նպատակն է լինելու կազմակերպության շարքերն այսուհետ եւս համալրել նվիրյալ, պետականամետ եւ հայրենատեր հայորդիներով:

Վեցերորդ՝ հայոց պետականության անընդհատ զարգացման, այդ թվում նաեւ ազգային բանակի հզորացման գործընթացներին անընդհատ մասնակցելու ժամանակ անվերապահորեն կատարել ՀՀ նախագահ եւ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանի հրամաններն ու որոշումները:

Յոթերորդ՝ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունը հայ ժողովրդի պատմական հայրենիքի՝ հայկական բարձրավանդակի արժանավոր ժառանգորդն է եւ հզոր ու միասնական Հայաստան կեր-

Մեր գործընկերն արժանացել է մրցանակի

ՕՔՍՖԱՄ միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակը հայտարարել էր մարզային լրագրողների աշխատանքների մրցույթ՝ «Կանանց իրավունքները Հայաստանում. դե-յուրե եւ դե-ֆակտո» խորագրով: «Այունյաց երկիր» թերթի խմբագրի տեղակալ Վահրամ Օրբելյանը մրցույթին մասնակցեց «Ծանր, անչափ ծանր է գործազուրկ կնոջ խաչը» հոդվածով: Մրցույթին ներկայացված 48 աշխատանքից նրա հրապարակումը հանձախումբը արժանացրեց երկրորդ մրցանակի, իսկ հոդվածագիրը ստացավ անվանական նվեր (առաջին մրցանակ ոչ մի աշխատանքի չտրվեց): Ստորեւ ներկայացնում ենք մրցույթի հանձնախմբի հավանությանն արժանացած հրապարակումը:

Ծանր, անչափ ծանր է գործազուրկ կնոջ խաչը

Հայ կինն ավանդաբար օջախի պահապան է եղել: «Կինը ներսի պատ է, ամուսինը՝ դրսի» ասացվածքը մի օրում չի ծնվել: Խորհրդային ժամանակաշրջանի վերջին տասնամյակներին հայ կինը ներգրավվել էր արտադրության մեջ, գիտության, կրթության, սպասարկման եւ այլ ոլորտներում: Միայն Կապանում 1970-1980-ական թվականներին գործում էր քսանից ավելի արդյունաբերական ձեռնարկություն, իսկ դրանցից մի քանիսի (Կապանի տրիկոտաժի արտադրական միավորում, «Էլեկտրոն», լուսատեխնիկական, կոնդենսատորների, սարքաշինական գործարաններ) արտադրական գործընթացներում հիմնականում կանայք էին ներգրավված: Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ շատ ձեռնարկություններ փակեցին դռները կամ սկսեցին գործել իրենց հզորությունների մի մասի չափով, այսինքն՝ կրճատվեցին բազում աշխատատեղեր, կինն այս անգամ, բայց ոչ իր կամոք, կրկին հայտնվեց տանը եւ զրկվեց ոչ միայն աշխատանքից, այլեւ աշխատավարձից, թեպետ նվազ, բայց գոնե գոյատեւելու համար միակ միջոցից:

Մարզկենտրոն Կապանում կանանց զբաղվածության խնդրին ծանոթանալու նպատակով եղանք Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Սյունիքի կենտրոնում: Առաջինը, որին իրազեկվեցինք, այն էր, որ գործազրկության մակարդակով Սյունիքը զիջում է միայն Շիրակի մարզին: Ինչ խոսք, երկրի սոցիալ-տնտեսական անկայուն վիճակի պատճառով զբաղվածության խնդիրը խորապես սրվել է, ինչից առավել տուժում են կանայք: Պատկերը ներկայացնելու համար ուզում եմ դիմել թվերի լեզվին: 2013թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով ըստ Սյունիքի զբաղվածության կենտրոնի՝ Կապանի տարածաշրջանում աշխատանք է փնտրում 1323 մարդ, որից 922-ը՝ կին: Գործազուրկի կարգավիճակ ստացած 1216 անձից 826-ը գեղեցիկ սեռի ներկայացուցիչ են, գործազուրկների մոտ 74 տոկոսը: Շատ տխուր թվաբանություն: Ցավալի է, բայց փաստ, որ կանանց մի ստվար շերտ դարձել է անպաշտպան եւ օգնության կարոտ...

Տարիքային առումով կանանց շրջանում գործազրկությունը հետեւյալ պատկերն է ներկայացնում. 16-ից 18 տարեկան՝ յոթ հոգի, 19-ից 24 տարեկան՝ 83 հոգի, 25-ից 30 տարեկան՝ 152 հոգի, 31-ից 34 տարեկան՝ 112 հոգի, 35-45 տարեկան՝ 251 հոգի, 46-54 տարեկան՝ 164 հոգի, 55-ից բարձր՝ 127 կին: Բերված թվական տվյալներից ակներեւ է, որ

գործազուրկ կանայք երիտասարդ են, ընդունակ աշխատելու, բարիք արարելու, բայց. . .

Շարադրանքն ակնհայտորեն ծանրաբեռնվում է թվերով, բայց ինչպես ասում են՝ թվերի լեզուն ավելի պերճախոս է: Իրավիճակն ավելի տխուր շեշտեր է ընդունում այն իրողությամբ, որ 2013թ-ին զբաղվածության կենտրոնում գրանցված կանանցից 103-ը ունի բարձրագույն կրթություն, միջին-մասնագիտական՝ 367-ը: Եթե շարունակենք վկայակոչել թվական տվյալներ՝ պիտի նշենք, որ 231 կանայք ունեն 3 տարուց ավելի գործազուրկի «ստաժ»: Ինչ ասել կուզի՝ զբաղվածության կենտրոնի հիմնական գործառույթն արտացոլված է հենց անվանման մեջ, այսինքն մարդկանց աշխատանքով ապահովելը: Ուստի կարող ենք ավելացնել, որ 2013թ.-ի կենտրոնի օժանդակությամբ աշխատանքի է տեղավորվել ընդամենը 180 կին:

Ուշագրավն այն է, որ նույնիսկ վկայակոչված ոչ սակավ թվական տվյալները ի զորու չեն տալու հիմնախնդրի ողջ պատկերը: Բանն այն է, որ կան նաեւ «թաքնված» գործազուրկներ, ովքեր զբաղված չեն աշխատանքային գործունեությամբ կամ նրանց աշխատանքային գործունեությունը պատահական կամ ձեւական բնույթ է կրում: Ուստի նրանք այս կամ այն պատճառով չեն դիմում զբաղվածության կենտրոն:

Երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի թելադրանքով ձեւավորվել են որոշակի խմբեր, որոնք եկամուտ են ստանում (եւ քիչ չեն նրանց թվում կանայք, եթե չասենք՝ մեծամասնություն են կազմում) պատահական զբաղմունքներից՝ մանրավաճառներ, սեզոնային աշխատանքներ կատարողներ եւ այլն: Նրանք նաեւ հաջողությամբ կհամալրեին գործազուրկների շարքերը: Ինչպես ասում են, սա չարիքի փոքրագույնն է: Այս տարվա հունվարի մեկից կառավարությունը դադարեցրել է գործազրկության նպաստների հատկացումը, որն ընդամենը 18 հազար դրամ է: Ընդ որում ընթացիկ տարում կշարունակեն նպաստ ստանալ նրանք, ովքեր մինչ 2014 թ.-ի հունվարի մեկը հաշվառված էին (զբաղվածության Սյունիքի կենտրոնի փոխանցմամբ՝ նպաստառու կանանց թիվը 153 է): Հաջորդ տարվանից այլեւս նպաստ ստացող չի լինի, այսինքն՝ գործազուրկին գոնե ցամաք հաց գնելու հնարավորությունից են զրկում…

Սոցիալական այդ ցավոտ հիմնահարցի պատկերը, անշուշտ, ամբողջանում է թվերով, բայց երեւույթն առավել ամբողջական ու շոշափելի է դառնում, երբ լսում ես իրենց աշխատանքը կորցրած մարդկանց խոսքը.

Քրիստինե Հակոբյան. ավարտել եմ Կապանի բժշկական ուսումնարանը. երեք տարի հանրախանութում գանձապահ եմ աշխատել. այժմ անգործ նստած եմ տանը, երեք տարեկան դուստր ունեմ, ամուսինս գյուղատնտեսական ակադեմիան է ավարտել, նա էլ աշխատանք չունի: Ժողովրդական առածն ասում է՝ մի տնից չենք, նույն հալին ենք, իսկ մենք եւ նույն տնից ենք, եւ նույն հալին:

Արմինե Հարությունյան. ավարտել եմ Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի իրավաբանության բաժինը, բայց մասնագիտությամբ չեմ աշխատել: Բուհավարտ, բարձր որակավորում ունեցող մասնագետները չեն կարողանում իրենց կրթությանը համար-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 7

ԱՐՄԵՆ ԱՖԱՆԴՅԱՆ. «Յուրաքանչյուրը պիտի համոզվի, որ ինքն օրենքով պաշտպանված է»

Հարցազրույց համարին

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

աճուրդները կազմակերպելու գործընթացին: Քրեական գործի հարուցման հիմքը թերթի հրապարակումն է, ըստ որի Գորիս քաղաքի հաշվեկշռում գտնվող գույքն էժան գներով օտարվել է, անհիմն կերպով զիջվել: Մյուս քրեական գործը վերաբերում է 2011-13թթ. ընթացքում Գորիսի քաղաքապետարանի հայտարարած մրցույթներին, այսինքն՝ շինարարական աշխատանքների, ծառայությունների մատակարարման մրցույթներին: Դրանք համեմատաբար նոր քրեական գործեր են, որոնց հարուցման առիթներից մեկը, ինչպես նշեցինք, հենց զանգվածային լրատվամիջոցի հրապարակումն է: Երկու քրեական գործի նախաքննությունն ընթացքի մեջ է:

– Պարոն Աֆանդյան, ցանկանում եմ մեր զրույցն այլ հարթություն տեղափոխել, ինչպես տեղեկացա Ձեր վերոնշյալ կենսագրությունից, ոչ միայն զբաղվել եք ձյուդո ըմբշամարտով, այլեւ դարձել եք ԽՍՀՄ համամիութենական մրցաշարի եւ ՀՀ առաջնության հաղթող: Սպորտն իրո՞ք մեծ տեղ ունի Ձեր կյանքում:

– Սպորտում Ձեր նշած հաջողությունները պատանեկան տարիքում են եղել, բայց, ցավոք, այժմ ազատ ժամանակ չունեմ սպորտով զբաղվելու: Թեպետ հնարավոր առիթը բաց չեմ թողնում, որ մարզավիճակս կարողանամ պահպանել:

– Ձեր կենսագրությունից երեւում է, որ առաջին անգամ է, որ մայրաքաղաքից դուրս եք աշխատում: Ի՞նչ տպավորություն ունեք Սյունիքից եւ սյունեցիներից:

– Այդպես է: Օրինապաշտ ժողովուրդ են սյունեցիները: Լավ եմ վերաբերվում Սյունիքին եւ սյունեցիներին: Նախկինում քիչ այցելություններ եմ ունեցել այս տարածաշրջան: Կապանում վերջին անգամ եղել եմ 25 տարի առաջ, իսկ Մեղրիում ընդհանրապես չէի եղել: Ար դեն աշխատանքային այցով հասցրել եմ լինել մարզի քաղաքային համայնքներում, ծանոթացել մարզային դատախազության նստավայրերի աշխատանքային պայմաններին: Իհարկե, դրանք հեռու են բավարար լինելուց, բայց մյուս կողմից պիտի հաշվի առնենք այն իրողությունը, թե ինչպիսի հնարավորություններ ունենք:

– Լրագրողներս մի հերթապահ հարց ունենք. ի՞նչ կավելացնեիք ասվածին:

– Ոչ մեկն իրեն օրենքից դուրս չպիտի համարի: Իսկ եթե մարդու կամ նրա ունեցվածքի հանդեպ ոտնձգություն է կատարվել, օրինախախտին պիտի ցույց տաս իր տեղը: Ընդամենն անհրաժեշտ է, որ յուրաքանչյուրս պատշաճ կատարի իր պարտականությունները: Եթե բնակչությունը որոշակի բնագավառներում դրական տեղաշարժեր նկատի, ուրեմն կարող ենք արձանագրել, որ դատախազության աշխատանքն իր արդյունքը տվել է:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

տելու պահանջատերն ու իրականացնողը:

Համագումարն ընտրեց նաեւ կազմակերպության ղեկավար մարմին՝ 127 անդամից կազմված խորհուրդ, ինչպես նաեւ Վերահսկիչ հանձնաժողով՝ հինգ անդամով:

«Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության վերընտրված նախագահ Խաչիկ Ասրյանը համագումարին ներկայացրեց կազմակերպության նոր աշխատակազմը.

1. «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության նախագահ՝ Խաչիկ Ասրյան,
2. «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության փոխնախագահ՝ Արմեն Կիրակոսյան,
3. «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության փոխնախագահ, կազմակերպության քարտուղար՝ Խաչատուր Մաթուլյան,
4. «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության փոխնախագահ՝ Վահան Հասրաթյան,
5. «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության փոխնախագահ, կազմակերպության մարզամշակութային հանձնաժողովի նախագահ, կազմակերպության աշխատակազմի ղեկավար՝ Տիգրան Առաքելյան,
6. «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության գաղափարաքարոզչական հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Բաբախանյան,
7. «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության հանձնաժողովի նախագահ, կազմակերպության նախագահիի խորհրդական՝ Մհեր Եղիազարյան,
8. «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության կանանց հանձնաժողովի նախագահ, կազմակերպության նախագահիի խորհրդական, կազմակերպության հիմնի խոսքի հեղինակ, գրող, հրապարակախոս՝ Ռուզան Ասատրյան,
9. «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության առողջապահության հարցերի հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Ղուկասյան,
10. «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության նախագահիի խորհրդական՝ Արծրուն Եղիազարյան:

Կազմակերպության նախագահը տեղեկացրեց նաեւ, որ կազմակերպության սոցիալական հանձնաժողովը որոշ ժամանակով դադարեցնում է աշխատանքը:

Առաջիկայում կազմակերպության նախագահի աշխատակազմում կլինեն նոր նշանակումներ:

Կազմակերպության նախագահ Խաչիկ Ասրյանը երախտագիտություն հայտնեց ՀՀ նախագահ, ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանին՝ «Այունյաց արծիվներ» եւ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունների կայացման ու հզորացման գործընթացում բացառիկ մասնակցություն եւ ներդրում ունենալու համար:

Խաչիկ Ասրյանը շնորհակալություն հայտնեց ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին՝ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության ռազմահայրենասիրական միջոցառումներին աջակցելու համար:

Խաչիկ Ասրյանը երախտագիտության ու շնորհավորանքի խոսք ուղղեց ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին՝ «Այունյաց արծիվներ» եւ «Հայոց արծիվներ» կազմակերպությունների ծրագրերին ու միջոցառումներին աջակցելու համար՝ նրան նվիրելով ուժի ու հզորության խորհրդանիշը՝ Սուր:

Խաչիկ Ասրյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ ոստիկանության պետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանին՝ կազմակերպության հայրենասիրական գործունեությանն աջակցելու համար եւ նրան նվիրեց կազմակերպության խորհրդանիշը՝ Արծիվ:

Խաչիկ Ասրյանը կազմակերպության բարձրագույն պարգեւով՝ «Հայոց արծիվ» ոսկյա հուշամեդալով պարգեւատրեց Արցախի հերոս, գրող, հրապարակախոս Զորի Բալայանին եւ ԼՂՀ ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանին:

ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը ՀՀ ԶՈՒ կազմավորման 22-րդ տարեդարձի եւ «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության հիմնադրման եւ գործունեության 4-րդ տարեդարձի կապակցությամբ գերատեսչական մեդալներով պարգեւատրեց «Հայոց արծիվներ» հայրենասիրական հասարակական կազմակերպության 17 անդամի:

Համագումարի աշխատանքների ավարտից հետո պատվիրակները կուռ շարքերով քայլեցին դեպի Մարշալ Բաղրամյանի անվան զորավարժարանի հրաձգարան եւ, համաձայն կրակային պատրաստության ծրագրի, կրակեցին մարտական փամփուշտներով:

«Հայոց արծիվներ» ՀՀԿ-ի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի հանձնաժողով
17 մարտի 2014թ.

Բոլորել էր ընդամենը 24 գարուն

Արցախյան ազատամարտ

Մերօրյա ազատամարտը սկսեցինք ֆիդայական ջոկատներով եւ որսորդական հրացաններով: Մարտից մարտ զորամիավորումները ղեկավարող հրամանատարները փորձ էին ձեռք բերում: Բայց կային այնպիսիք (ճիշտ է, սակավաթիվ էին), ովքեր խորհրդային բանակի փորձառությունն ունեին: Քչերից մեկը ենթասպա Վահրամ Սահակյանն էր: Աչք է բացել մանկավարժի ընտանիքում 1970 թվականի դեկտեմբերի 2-ին, ավարտել Ղափանի N27 գիշերօթիկ միջնակարգ դպրոցը: Հայրենի քաղաքի լեռնամետալուրգիական տեխնիկումում երկու տարի ուսումնառություն ստանալուց հետո պարտադիր զինվորական ծառայությունն անցել է Սվերդլովսկում տեղակայված զորամասում: Զինծառայության ընթացքում ավարտել է նաեւ ռազմական վեցամսյա դասընթացներ եւ ենթասպայի ուսադիրներով վերադարձել զորամաս: Ժամկետային ծառայությունն ավարտելուց հետո նույն զորամասում ծառայել է եւս մեկ տարի:

Այդ ընթացքում հայ-ադրբեջանական հակամարտության թափանիվն արագացնում էր պտույտները: Զգաց, որ հայրենիքում պիտի լինի: Վերադարձավ եւ 1992-ի սեպտեմբերից ռազմագիտություն էր դասավանդում Ջագեձորի միջնակարգ դպրոցում: Ցանկությունը մեծ էր՝ խորհրդային բանակում ստացած գիտելիքները հաղորդել պատանիներին: **«1993-ի հունվարի վերջն էր,** - վերհիշում է հայրը՝ պատմության երկարամյա ուսուցիչ Հրանտ Սահակյանը, - **մի օր եկավ, թե՝ էլ չեմ ուզում մանկավարժություն անել, - ես էլ ցանկացա, որ գոնե մինչեւ ուսումնական տարվա ավարտն աշխատի, բայց ոչինչ չստացվեց: Անդրդվելի էր: - ես զինվորական եմ, իմ տեղը կռվող տղաների կողքին է: - Ի՞նչ անեի, ինձ մնում էր օրհնել որդուս ընտրած ճանապարհը»:**

Մի քանի օր հետո արդեն ենթասպա Վահրամ Սահակյանը Կապանի դեսանտագրոհային գումարտակի մարտիկների հետ էր: Իսկայնուհետեւ մասնակիցը եղավ Կուբաթլիի, Զանգելանի ուղղությամբ մղվող մարտերին, Ներքին Հանդ գյուղի պաշտպանությանը: 1994-ի հունվարը բեկումնային էր Արցախյան պատերազմում: Անընդհատ լարված ու թեժ մարտական գործողություններ էին ընթանում: Թշնամին վիրավոր գազանի նման վերջին ճիգերն էր գործադրում՝ վերագրավելու մեր մարտիկների կողմից ազատագրված տարածքները, անընդհատ գնդակոծում եւ հրետակոծում էր մեր դիրքերը: Առավել դժվարին օր էր հունվարի 26-ը: Առավոտից սկսած Վահրամն իր վաշտով կարողացավ կասեցնել հակառակորդի առաջխաղացումն աջ թեւում: Թվում էր, թե ամեն ինչ բարեհաջող պիտի ավարտվեր, բայց դարանամուտ դիպուկահարի գնդակը գտավ նաեւ Վահրամին, ով գլխի շրջանում հրազենային ծանր վնասվածք ստացավ: Կարեվեր խոցված զինվորականին արագությամբ դուրս բերեցին կրակադաշտից եւ տեղափոխեցին Կապանի հիվանդանոց, բայց կյանքը փրկել չհաջողվեց: Ծանր վերք ստանալուց վեց օր անց՝ փետրվարի 1-ին, հայրենիքի պաշտպանը կնքեց մահկանացուն:

Հավերժիճամ փորդ դարձած Վահրամ Սահակյանի մասին քիչ չի գրվել հանրապետական եւ մարզային մամուլում («Հայ զինվոր», «Այունյաց աշխարհ»): Այս անգամ նախընտրեցինք լսել նրա զինակիցների հուշերը, որոնք նոր վրձնահարվածներ են ավելացնում նահատակ մարտիկի դիմանկարին:

Արարատ Մանուչարյան (փոխգնդապետ, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր, ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի օպերատիվ վարչության ուղղության պետ), - Պիտի ասեմ, որ 1994-ի հունվարը լուրջ փորձություն էր մեր գումարտակի համար: Հակառակորդը պարբերաբար գնդակոծում եւ հրետակոծում էր մեր դիրքերը: Հունվարի 9-ի, 12-ի, 18-ի, 23-ի մարտերին իրեն լավագույն կողմերով դրսեւորեց ենթասպա Վահրամ Սահակյանը: Նա մինչ այդ դասակ էր ղեկավարում, բայց իր այդ նվիրվածության շնորհիվ նրան վստահեցին վաշտի հրամանատարի պարտականությունները: Մեջս տպավորվել է այն, որ զինակիցները հարգանքով եւ վստահությամբ էին վերաբերվում հրամանատարին, ինքն էլ անկեղծորեն հետաքրքրվում էր ենթակաների որպիսությամբ, նրանց խնդիրներով, անհրաժեշտության դեպքում քաջալերում էր նրանց: Ավա՜ղ, նախախնամությունը նրան կարճ կյանք էր պարգեւել:

Արա Սարգսյան (մարտական ընկեր), - Վահրամ Սահակյանի հետ մոտիկից շփվելու առիթ եղավ 1993թ. փետրվարի 1-ից, երբ նա միացավ մեր գումարտակի մարտիկներին: Թեպետ երիտասարդ տարիքին՝ ձեւավորված մտածելակերպ ուներ, մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր: 1993-ի մարտին, երբ վիրավորվեցի, առաջինը Վահրամն ինձ օգնության հասավ, նրան հանձնեցի ավտոմատս, այդպիսի չգրված օրենք կա կռվողների մեջ. առաջին օգնության հասնողին հանձնել զենքը: Մարդամոտ էր, անմիջական, ինչի շնորհիվ արժանացել էր զինակիցների հարգանքին:

Գարիկ Ներսիսյան (մայոր, Կապանի զինկոմի տեղակալ, զորահավաքային բաժանմունքի պետ), - Նրա ընտանեկան դաստիարակությունը եւ խորհրդային բանակում կուտակած փորձը, պարտաճանաչությունը, հրամանները ժամանակին կատարելը վկայում էին այն մասին, որ պատրաստի զինվորական է: Պատահական չէր, որ երբ վաշտի հրամանատարը վիրավորվեց, Վահրամին վստահեցին նրա պարտականությունները: Նրա ակտիվությունը, համարձակությունը ոգեւորում էին ծառայակիցներին: Մի անգամ, հիշում եմ, Հորադիզում էինք: Վիրավորներ կային, բնականաբար, տխուր եւ ընկճված էինք, զգաց մեր հոգեվիճակը, սկսեց ուրախ պատմություններ պատմել՝ փորձելով մեզ հանել այդ տխուր վիճակից: Ցանկանում եմ երախտագիտությունս հայտնել ձեր թերթին մեր զոհված զինակցի հիշատակը հարգելու եւ նրան հիշելու համար: Արցախյան պատերազմի բոլոր մասնակիցները՝ նահատակ, թե կենդանի, ուշադրության կենտրոնում եւ պետական հոգածության ներքո պիտի լինեն:

Գարիկ Պապյան (մարտական ընկեր), - Վահրամի մասին երկար կարելի է խոսել ե՛ւ որպես մարդու, ե՛ւ որպես հրամանատարի: Միշտ ծիծաղը երեսին էր, ինչը նշան էր այն բանի, որ նման մարդուց, ինչպես մեծերն են ասում, վատ բան չես սպասի: Պատասխանատվության զգացում ուներ, ոչ մի հանձնարարություն կամ խոսք գետնին չէր թողնի: Նրա հետ շատ հուշեր են կապված. պատմեմ, թե ինչպես ամուսնացավ: Տրիցատիի (երկաթուղու 30-րդ կիլոմետր, ծանոթ. խմբ) դիրքերում էինք, մի օր ասաց. «Գարիկ, ընկերուհուս կարոտել եմ, մի օրով պիտի գնամ»: Երկու օր հետո եկավ, թե ընկերուհուս տուն եմ տարել, մենք էլ շնորհավորեցինք, բարին մաղթեցինք: Այդպես էր նա, եթե մի նպատակ էր դնում իր առջեւ, անպայման պիտի կատարեր: Մի այլ դեպք էլ է տպավորվել մեջս. 1994-ի հունվարի 6-ին մեզ գնացքով պիտի տեղափոխեին Հորադիզ: Հարավ-արեւելյան ճակատում իրադրությունը սրվել էր, հակառակորդն այդտեղ ռազմական տեխնիկայի եւ զինուժի մեծ կուտակումներ ուներ, լուրջ մարտեր էին ընթանում: Սառնաշունչ երեկո էր, Կապանի կայարանում մոտեցավ ինձ, թե՝ վտանգավոր տեղ ենք գնում, միշտ իրարից անբաժան պիտի լինենք: Այդպես էլ եղավ, հունվարի 6-ից մինչեւ նրա ծանր վիրավորվելը կողք կողքի էինք կռվում, կիսում մի պատառ հացը:

Մինչեւ 1997 թվականը զինծառայության մեջ եմ եղել եւ միշտ Վահրամի բացակայությունը զգացել եմ, նման հավատարիմ մարդու կարիք յուրաքանչյուր ոք զգում է, մանավանդ երբ նա այլեւս չկա…

Ի դեպ, Վահրամի եղբորորդին՝ Զորայրը, որոշել է շարունակել հորեղբոր կիսատ թողածը՝ զինվորական գործը, սովորել եւ ավարտել է Հունաստանի մայրաքաղաք Աթենքի ռազմական ակադեմիան: Այժմ հրետանավորի մասնագիտությամբ ծառայում է հայոց բանակի՝ Իջեւանում տեղակայված զորամասում:

Կարելի է փաստել, որ Վահրամ Սահակյանի ծառայությունն իր երկրին գնահատվել է: 2001-ի մայիսի 6-ին (հետմահու) արժանացել է «Արիության համար» մեդալի: Կապանի N5 հատուկ դպրոցի (նախկինում՝ N27 գիշերօթիկ դպրոց) դասարաններից մեկն անվանակոչվել է եւ կրում է մերօրյա ազատամարտի նահատակ Վահրամ Սահակյանի անունը: Նրա հայրենի գյուղի՝ Արծվանիկի մանկական այգում կառուցվել է Արցախյան գոյամարտում ընկածների հիշատակը հավերժացնող հուշահամալիր, որի հարակից փողոցը կրում է Վահրամ Սահակյանի անունը:

Թող որ լինի այնպես, ինչպես հանրահայտ խոսքում է ասվում՝ ոչ ոք չի մոռացել, ոչինչ չի մոռացվել:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Եղվարդի մայրական դաշտը

Գենոֆոնդ

Նախքան ակնարկիս բուն նյութին անցնելը հիշեցի մի դիպված, որն անմիջապես առնչվում է ասելիքիս հետ:

Երեւանի պետական համալսարանում երկրորդ կիսամյակի երեք քննությունը հանձնել էի գերազանց, սակայն քաղաքատնտեսությունից ստացել էի չորս: Դասախոս Սուրեն Միքայելյանից (ծագումով Վ. Խոտանանից) խնդրեցի թույլատրել վերահանձնել եւ ստանալ գերազանց, որը կնպաստեր կրթաթոշակիս ավելացմանը:

Նա հարցրեց՝ ի՞նչ ունես: Ասացի, որ հայրս պատերազմի առաջին խմբի հաշմանդամ է, ես էլ 10 երեխայից ավագն եմ:

- Քո հայրը կապիտալիստ է, մայրը՝ ազգապահպան:

- Ինչի՞ մասին եք խոսում, նա ուներ ընդամենը մի քանի ոչխար, մեկ էլ՝ մի էշ:

- Ես քեզ սխալ եմ գնահատել, եթե չգիտես, որ մարդն ամենամեծ արժեքն է, երկրի հարստությունը, ուստի խնդրելու իրավունք չունես: Հետո նա պատմեց, որ ունի ընդամենը մի տղա, ով վատառողջ է, որից ծնվածը՝ նույնպես…

Եկա հանրակացարան, որտեղ միեւնույն սենյակում ապրում էր համագյուղացի, 11 երեխա ունեցող ընտանիքի չորրորդը՝ Սլավիկ Հարությունյանը (այժմ՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր) կես-կատակ, կես-լուրջ ասացի. «Գիտե՞ս, որ կապիտալիստի տղա ես, դասախոսս ասաց, ովքեր շատ երեխա ունեն, նրանց հայրերը կապիտալիստ են, մեր ազգի պաշտպաններն էլ իմ ու քո մայրերն են»:

Էդ ո՞վ է տեսել, որ կապիտալիստի տղան ծակ շալվարով մանգա, գիշերն էլ պահակություն անի (երկուսս էլ հանրակացարանում գիշերային դռնապահ էինք):

Երբ եկան ազերիներից մեր սահմանների պաշտպանության օրերը, նա եկավ գյուղ, միասին կազմեցինք քաղաքաբնակ եղվարդցիների ցուցակը, ստեղծեցինք օգնության հանձնաժողով: Մի հայտարարությունից Կապան եւ Քաջարան քաղաքներում ապրող 113 եղվարդցի եկավ, որոնց միջոցով սահմանում հերթապահողների համար կազմակերպվեց բազմակողմանի օգնություն:

Միասին սկսեցինք հաշվել մինչեւ 1970թ. ծնվածներին (առանց թոռների եւ ծոռների): Պարզվեց, որ եղվարդից չորս մայր՝ Սաթենիկ Հարությունյան, Վարսենիկ Հարությունյան, Աշխեն Աղավելյան, Հասմիկ Սարգսյան, հերոսուհի մայրեր են, յոթ հոգի ունեցել է ութական երեխա, 10 հոգի՝ յոթական, 12 մայր՝ 5-6-ական, 10 մայր՝ չորսական եւ ընդամենը մի քանի հոգի 2 կամ երեք երեխա: Հիրավի մեծ ռեսուրս, հարատեւող հարստություն, հայրենի հողի պաշտպանության մի գումարտակ (243 հոգի):

Հաշվեցինք, թե քանի հոգի չի ծառայել բանակում, պարզվեց, որ 243 տղա-աղջիկը, բացառությամբ 5 տղայի, լիակատար առողջ են եղել:

Մեր մայրերի զավակներից շատերը գիտության, արվեստի, ռազմական գործի, անգամ կրկեսի, ավիացիայի եւ այլ բնագավառի ճանաչված գործիչներ են, մեծ թիվ են կազմում բարձրագույն եւ մասնագիտական կրթություն ունեցողները:

Մայրերը, հայրերը երեխաներին տեղյակ էին պահում գերդաստանի մեծերի, բարեկամական կապերի, ուսուցիչների նկատմամբ վերաբերմունքի եւ դրական դրսեւորումներ արմատավորող շատ բաների մասին:

Բազմանդամ բոլոր ընտանիքներում առաջնային էր աշխատանքային դաստիարակությունը: Մեծին հանձնվում էր մեծ գործ, փոքրին՝ իրենց ուժի համեմատ: Բացի ընտանեկան գործերից երեխաները մասնակցում էին հանրային աշխատանքներին:

Նրանք տեսնում էին ծնողների չարչարանքը, հոգեկան իրավիճակները, եւ եթե ոմանք՝ լինելով հեռվում, չէին կարողանում անմիջապես օգնել, վրա էին հասնում դրկիցները:

Մայրերի մասին աշխարհի եւ մեր մեծերը, գիտունները շատ տպավորիչ բնորոշումներ, բանաստեղծություններ, երգեր ունեն գրված եւ դեռ կլինեն, քանզի դեռ չի չափվել հոգեկան-ֆիզիկական, նյարդային այն չափաբաժինը, որ մայրը ներ է դնում իր երեխային աճեցնելու, արժանի մարդ դաստիարակելու գործում:

Կարոտախտը չէ, որ ստիպել է հանդես գալ մեր մայրերի մասին, ոչ էլ գովազդը, որի կարիքը նրանք չեն զգացել, քանզի զավակներն իրենց կեցվածքով ու մարդկային արժանապատիվ վարքով արդեն փառավորել են նրանց:

Խնդիրն այն է, որ մեր գենոֆոնդը գնալով սպառվում է: Այսօր վտանգվում է բոլորիս ապագան, կենցաղում արմատավորվում են թշնամական բարքերը: Դեռ երեխան չծնված՝ որոշում են սեռը, եթե ցանկալի չէ՝ մայրը կարող է դադարեցնել հղիությունը: Իմ կարծիքով՝ դա մարդասպանություն է, պետք է հասարակական պարսավանքի ենթարկել, պատժել օրենսդրորեն: Կամ՝ ծավալուն գովազդ է գնում համասեռամոլության, բազմակնության եւ շատ այլանդակ բարքեր արմատավորելու համար: Դրանք խորթ երեւույթներ են՝ դրսից ներմուծվող: Լրջորեն պետք է մոտենալ ազգապահպանման խնդրին: Վերջապես դա պետական նշանակության, գոյատեւման հարց է:

ԱՐԿԱԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հասարակություն

Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ Սյունիքում

Կառավարությանն անվստահություն հայտնելը կիսամիջոց է. այս մասին անցած շաբաթ Կապանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ հայտարարել է «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ ընդգծելով, որ երկրում փոփոխություններ իրականացնելու համար անհրաժեշտ է ամբողջական իշխանափոխություն:

Այս հայտարարությունը Ռաֆֆի Հովհաննիսյանն արել է անցած ուրբաթ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության (ԲՀԿ) ղեկավար Գագիկ Ծառուկյանի հետ հանդիպումից հետո: Ոչ իշխանական չորս ուժերը՝ ՀԱԿ-ը, ԲՀԿ-ն, Դաշնակցությունը եւ «Ժառանգությունը» այս փուլում համաձայնել են համագործակցել կառավարությանն անվստահություն հայտնելու ԲՀԿ-ի նախաձեռնության շուրջ՝ հույս ունենալով, որ հետագա փուլերում արդեն կհամագործակցեն ամբողջական իշխանափոխության շուրջ:

«Եթե կառավարությանն անվստահություն հայտնելու հարցը երբեւէ ներկայացվի խորհրդարան, «Ժառանգությունը» երբեք դեմ չի քվեարկի: Մենք կողմ ենք, բայց դա կիսամիջոց է: Մի վարչապետ, մի նախարար, մի չինովնիկ փոխելով ոչինչ չի փոխվի.... Մենք բոլորս գիտենք, որ մեր արատն ամենավերեւից է», – ասել է Հովհաննիսյանը:

Կապանցիների առջեւ ելույթ ունենալով Ռաֆֆի Հովհաննիսյանն ընդգծել է, թե այսօր բոլորն են գիտակցում, որ այսպես շարունակել չի կարելի, եւ նրանք, ովքեր կարծում են, թե պետք է սպասել հերթական ընտրություններին, ապա պատրանքների մեջ են. երկրին անհրաժեշտ են արմատական փոփոխություններ, եւ եթե քաղաքական ու քաղաքացիական ուժերի լայն համախմբում տեղի չունենա, ապա մեղավոր կլինեն բոլորը: Հովհաննիսյանը, ի դեպ, չի մոռացել քաղաքական ուժերին հիշեցնել, թե ինչպես անցած տարի նախագահական ընտրություններում իրեն որեւէ մեկը չսատարեց:

«Անցյալ տարի չուզեցին, որովհետեւ թեկնածուն ուրիշ տեղից էր, ուրիշ կուսակցությունից, քաղաքացիական հասարակությունից էր... ես քեն պահող, նեղացող մարդ չեմ: Ժողովուրդը մի բան է պահանջում, միացեք, վերջացրեք այս մղձավանջը», – ասել է «Ժառանգության» առաջնորդը:

Ինչպես Գագիկ Ծառուկյանն էր ԲՀԿ համագումարում հայտարարել, թե երկրում փոփոխություններ իրականացնելու ճանապարհին պատրաստ է զարգացման ցանկացած սցենարի եւ լավ հասկանում է սպառնացող վտանգները, Հովհաննիսյանը նույնպես հայտարարել է, թե պատրաստ է զոհողությունների:

«Պատրաստ եմ զոհողության, բայց ոչ երբեք էշ նահատակի, որ առանց օբյեկտիվ, առարկայական ռեսուրսի մենք ունենանք հարյուր թաղումներ մեր երկրում», – ասել է նա:

Ի դեպ, կապանցիների հետ հանդիպման ժամանակ Ռաֆֆի Հովհաննիսյանն անդրադարձել է նաեւ անցած տարի տեղի ունեցած նախագահական ընտրություններին եւ դրան հաջորդած հետընտրական իրադարձություններին, երբ ապրիլի 9-ին այլընտրանքային երդմնակալության օրը Բաղրամյան պողոտայում ոստիկանության հետ բախումներից հետո Ռաֆֆի Հովհաննիսյանը ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի հետ գնաց Ծիծեռնակաբերդ աղոթելու: Այս աղոթքը շատերի կողմից միանշանակ չէր ընդունվել: «Ժառանգության» առաջնորդն իրեն քննադատողներին հակադարձել է՝ միայնակ արել են այն, ինչ կարողացել են:

«Ինչպես եղավ, որ «Սերժիկ հեռացիր» կոչերի ներքո ոստիկանապետը մեր հետեւից վազեց մոմով եւ ուզեց մեզ հետ լինել: Դա իր հարգելի որոշումն էր, բայց թող ոչ մեկը հեքիաթներ չհյուսի մեր պայքարի մասին: **Մենք տարանք մեր պայքարը որքան հնարավոր է, առանց որեւէ այլ քաղաքական ուժի զորակցության, առանց որեւէ այլ օտար մայրաքաղաքի օգնության»,** – ընդգծել է «Ժառանգության» առաջնորդը:

Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ միասին Կապան, Սիսիան եւ Գորիս այցելած «Ժառանգություն» կուսակցության գլխավոր քարտուղար Ստեփան Սաֆարյանն «Ազատության» հետ զրույցում տեղեկացրեց, որ Հովհաննիսյանը ոչ իշխանական ուժերի ղեկավարներին առաջարկել է հանդիպել՝ օրակարգում ունենալով ամբողջական իշխանափոխություն իրականացնելու հարցը: Նման առաջարկով Հովհաննիսյանը հանդես է եկել Կապանում ժողովրդի հետ ունեցած հանդիպման ժամանակ:

Ստեփան Սաֆարյանը մեզ հետ զրույցում վերահաստատելով «Ժառանգության» մոտեցումը, ընդգծեց, որ իրենք դեմ չեն կառավարության հրաժարականի պահանջին, բայց «Ժառանգությունը» չի զլանա կրկին հայտարարել, որ կառավարության հրաժարականի պահանջը մասնակի լուծում է, կես քայլ է, եւ այն չէ, ինչին սպասում է հասարակությունը. **«Այդ դիտարկումները, ի դեպ, բարձրացրին հենց իրենք՝ հանդիպման եկածները, ովքեր նշում էին, որ չեն պատկերացնում, որ մասնակի կամ փուլային իշխանափոխությունը որեւէ շանս ունի երկրում արմատական փոփոխության հանգեցնելու»:**

Ի պատասխան մեր հարցին, թե կարո՞ղ ենք ասել, որ եթե վստահություն չունենան, որ կառավարությանն անվստահություն հայտնելու քայլին կհաջորդի ամբողջական իշխանափոխության պահանջը, ապա «Ժառանգությունը» չի մտնի այդ գործընթացի մեջ, Ստեփան Սաֆարյանն ասաց, թե այդ հարցին սպառիչ պատասխան կարող է տալ կուսակցության ղեկավարը, բայց ամեն դեպքում կուսակցության գլխավոր քարտուղարը հետեւյալ համոզմունքն ունի. – **«Եթե ամբողջական իշխանափոխության շուրջ համախմբում չկա, բնականաբար, այդտեղ որեւէ մեկը չի լինելու, ոչ միայն «Ժառանգությունը», այլեւ մյուսները»**:

azatutyun.am
17.03.2014

Մեր գործընկերն արժանացել է մրցանակի

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 5

ժեք աշխատանք գտնել, ուր մնաց ինձ նման մեկը...Յոթ տարի աշխատել եմ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Կապանի մասնաճյուղում որպես հսկիչ-գործակալ, ունեմ 2 անչափահաս երեխա: Ամուսինս նույնպես չի աշխատում: Սրանով, կարծում եմ, ամեն ինչ ասված է...

Գայանե Հակոբյան. միջնակարգ կրթությունս ստացել եմ Ռուսաստանում: Յոթ տարի է՝ հայրենի քաղաքում եմ: Աշխատել եմ սպասարկման ոլորտում՝ որպես վաճառող: 6 ամիս է՝ չեմ աշխատում, զբաղվածության կենտրոնում գրանցվել եմ, բայց առայժմ գործազուրկի նպաստ չեմ ստացել:

Աննա Բաբայան. աշխատել եմ «Դանեսսա» ՍՊԸ-ում՝ հսկիչ վաճառող, գանձապահ, մեկ տարի է՝ անգործ եմ: Ամուսինս չի աշխատում: Նոր է վերադարձել արտերկրից: Երկու ամիս է՝ հաշվառված եմ զբաղվածության կենտրոնում, ըստ իմ ստաժի՝ գործազուրկի նպաստ կստանամ յոթ ամիս:

Մարիետա Օհանջանյան. Կապանի լեռնամետալուրգիական տեխնիկումի շրջանավարտ եմ, աշխատել եմ Քաջարանի տրիկոտաժի ֆաբրիկայում եւ խանութում՝ վաճառող: Մեկ տարուց ավելի է՝ անգործ եմ, նախորդ տարվա հոկտեմբերից գրանցվել եմ զբաղվածության կենտրոնում, մինչեւ այս տարվա հոկտեմբերը նպաստ պիտի ստանամ: Քաջարանում հանրապետության ամենամեծ ձեռնարկությունն է գործում, բայց տարիքս այն չէ, որ գործի ընդունվեմ, հիվանդությունս էլ զգալ է տալիս:

Զբաղվածության կենտրոնում փորձում են ելք գտնել. աշխատանքի շուկայում կանանց մրցունակ դարձնելու նպատակով կազմակերպվում են վերաորակավորման դասընթացներ, այլ միջոցառումներ: Մասնավորապես, զբաղվածության պետական ծրագրերի շրջանակում 2013թ.-ի հոկտեմբերի 11-ին Կապանի մշակույթի կենտրոնում անցկացվեց աշխատանքի տոնավաճառ, որ կազմակերպել էր «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը՝ Սյունիքի մարզպետարանի աջակցությամբ: Տոնավաճառին մասնակցում էին Սյունիքի մարզից գործարարներ, աշխատանք փնտրող անձինք, բուհերի եւ քոլեջների ավարտական կուրսերի ուսանողներ, ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտներ: 40-ից ավելի գործատու ներկայացրել էր մոտ 260 աշխատատեղ, որից 214-ը՝ առկա, 46-ը՝ կանխատեսվող: Կապանում նման տոնավաճառ նախորդ անգամ կազմակերպվել էր 2009թ.-ին: Ներկայացվել էր 135 թափուր աշխատեղ: Տոնավաճառին հաջորդող երեք ամս վա ընթացքում այդ աշխատատեղերը լրացվել էին մարզային զբաղվածության կենտրոնի միջոցով:

Այս ամենը, կարծում ենք, կաթիլ է օվկիանոսում եւ բալասան չի կարող լինել գործազրկության պատճառած վերքերին: Սոցիալական այս չարիքի մասշտաբները նվազեցնելու եւ կանանց հանրօգուտ աշխատանքում ներգրավվելու խնդրում միակ տրամաբանականը զբաղվածության պետական լուրջ քաղաքականության մշակումն է: Այլապես միշտ նույն ջուրն է լինելու, նույն ջրաղացը... ■

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ. «Որոտանի հէկերի վաճառքը դարի հանցագործությունն է»

«Օրենսդրության կոպտագույն եւ բազմակի խախտումներով, Ազգային ժողովի շրջանցմամբ մասնավորեցված Որոտանի կասկադն առանց մրցույթ հայտարարելու եւ իրական արժեքից անհամեմատ ցածր գնով՝ ընդամենը 180 միլիոն դոլարով, վաճառվեց ամերիկյան երկու ընկերության: Հայաստանը, այսպիսով, կորցրեց իր էներգետիկ համակարգի պետությանը պատկանող վերջին նշանակալի հանգույցը, ինչը ոչ այլ կերպ, քան դարի հանցագործություն, չի կարելի կոչել», – մարտի 1-ին Հայ ազգային կոնգրեսի հրավիրած բազմահազարանոց հանրահավաքի ժամանակ իր ելույթում հայտարարեց ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը:

«Նորանոր հարկատեսակների, պարտադիր ապահովագրումների եւ չդադարող թանկացումների միջոցով ժողովրդի վերջին լումա

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 8

Շամբի ջրամբարի հորանային ջրաթափը

«Վերադարձի» անդրանիկ համագումարը

Կապանի մշակույթի կենտրոնի կինոդահլիճում մարտի 2-ին տեղի ունեցավ ««Վերադարձ» երիտասարդական քաղաքացիական շարժում» հասարակական կազմակերպության անդրանիկ համագումարը: Նախ տեսաֆիլմի միջոցով անդրադարձ կատարվեց կազմակերպության վեցամսյա գործունեությանը (հիմնադրվել է 2013թ. սեպտեմբերի 5-ին): Այնուհետեւ խոսքը տրվեց կազմակերպության հիմնադիր նախագահ Դավիթ Սիմոնյանին, ով մասնավորապես նշեց, թե մեր երկրում ծնվել եւ հասունանում է մի մշակույթ, երբ քաղաքական դիրքորոշումները հիմնականում արտահայտվում են ընտրությունների ժամանակ, իսկ հասարակության մտահոգություններն ու խնդիրներն առավել արդյունավետորեն արտահայտվում են քաղաքացիական նախաձեռնությունների ձեւով: Ըստ բանախոսի՝ անձը շղթայված չէ իր կուսակցական պատկանելությամբ, ինքնուրույն է ներկայանում որպես ՀՀ ազատ քաղաքացի, հայ մարդ, ով մտահոգված է երկրի ներկայով եւ ապագայով: Այս համատեքստում Դավիթ Սիմոնյանը հանդես եկավ հայտարարությամբ. **«Անկեղծ ասած՝ ստեղծման պահին մտավախություն եմ ունեցել, որ կազմակերպությունը կքաղաքականացնեն՝ հաշվի առնելով հանգամանքը, որ կազմակերպության նախագահն եմ, իսկ հայրս՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության Աժ խմբակցության պատգամավոր: Միաժամանակ կարծում եմ, որ դա մարդկանց մտածելակերպի խնդիրն է, ոչ թե կազմակերպության, բայց նման պայմաններում գործելը չի բխում կազմակերպության շահերից: Ուստի հրաժարվում եմ լինել կազմակերպության խորհրդի նախագահ: Սրանով ուզում եմ կրկին անգամ բացառել իմ ուղղակի եւ անուղղակի ազդեցությունը կազմակերպության անդամների վրա քաղաքական գործընթացներում: Համոզված եմ, որ նորընտիր խորհուրդը եւ խորհրդի նախագահը հետագայում նույնպես կգործեն ի շահ կազմակերպության՝ նպատակ ունենալով պահպանել «Վերադարձի» ինքնուրույնությունը»:**

Կազմակերպության հիմնադիր համագումարը հաստատեց կազմակերպության կանոնադրությունը, ընտրվեց խորհրդի կազմը, բաց քվեարկությամբ «Վերադարձի» նախագահ ընտրվեց Գոռ Թադեւոսյանը: Նորընտիր նախագահը շնորհակալություն հայտնեց վստահության համար եւ համոզմունք, որ կազմակերպության նոր ընտրված խորհուրդն իր ջանքերը կուղղի կազմակերպության ծրագրերի իրականացմանը: Նաեւ հայտնեց, որ «Վերադարձ» ՀԿ-ի հետ համագործակցության առաջարկություն ունեն նույն նպատակներն ու առաքելությունը ունեցող մի քանի հասարակական կազմակերպություններ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հույժ կարեւոր

Դու եւս կարող ես քո մասնակցությունն ունենալ

Գործուն եւ նպատակային այս օրն է պայմանավորում ապագան: Ապագա, որին հասնելու համար մեզանից յուրաքանչյուրն, անգամ փոքր իսկ ցանկության դեպքում, կարող է հնարավորինս սատար լինել նմանատիպ հոգսերով երեխաներին: Դու եւս կարող ես քո մասնակցությունն ունենալ հերթական ամսվա հրատապ ծրագրի իրականացմանը: Գուցե դո՞ւ ես նրանցից մեկի աջակիցը…

Վարդան Ասատրյան (ծնվել է 09.02.2007թ.). երեխայի մոտ ախտորոշված է սպաստիկ տետրապարեզ: Վարդանին խորհուրդ է տրվում հաճախել ձիաթերապիայի երեք կուրս, որի արժեքը կազմում է 60,000 (վաթսուն հազար) դրամ:

Նարեկ Հարությունյան (ծնվել է 25.04.2007թ.). երեխայի մոտ ախտորոշված է ՄՈՒԿ՝ մանկական ուղեղային կաթված, եւ մարմնի ֆունկցիոնալ առաջընթացի համար անհրաժեշտ է կանգնակ՝ 120.000 դրամ արժողությամբ:

Գագիկ Բաբայան (ծնվել է 17.06.1995թ.). բժշկական հետազոտության արդյունքում երեխայի մոտ ախտորոշվել է հետին միզուկի կափույր, երկկողմանի ուրետերեոհիդրոնեֆրոզ, խրոնիկ երիկամային անբավարարություն, ծրագրային հեմոդիալիզին համապատասխան վիճակ: Երեխային շտապ անհրաժեշտ է երիկամի փոխպատվաստում, որի համավճարը կազմում է 2.500.000 դրամ:

Ցանկության դեպքում կարող եք աջակցել ծրագրին՝ «ԷԽՈ» ՀԿ թիմի բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելով՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ 205004201674: Ինչպես նաեւ այցելելով մեր պաշտոնական կայք՝ www.ekhongoarmenia.am: Դուք կծանոթանաք մեր գործունեությանը, իրականացրած եւ հրատապ ծրագրերին: Մենք պատրաստ ենք համագործակցել բոլոր նրանց հետ, ովքեր ցանկանում են որակապես փոխել հաշմանդամ մարդկանց կյանքը եւ տեսնել նրանց մեր հասարակության լիարժեք, լիիրավ անդամ:

Սյունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 20.03.2014թ.:

Մուցքի հանքավայրում ոսկու նոր հարուստ հանքերակ է հայտնաբերվել

Մուցքի ոսկու հանքավայրում բրիտանական «Orogen Gold» ընկերությունը ոսկու հարուստ հանքերեւակում է հայտնաբերել: Ինչպես տեղեկացնում է «Orogen Gold»-ի պաշտոնական կայքը, նախնական հետախուզման արդյունքով հայտնաբերվել է ոսկու լայն երակ ոչ մեծ խորության վրա: 59.5 մետր խորության վրա հայտնաբերվել է ոսկի 0.42գ/տոննայում, եւ 42մ խորության վրա հայտնաբերվել է ոսկի 0.78գ/տոննայում: Հետախուզման արդյունքները մեծ պոտենցիալ են ստեղծում Մուցքի հանքավայրի առավել լայնածավալ շահագործման համար: Երկրաբանահետախուզական աշխատանքները կշարունակվեն 2014թ. գարնանը:

Հիշեցնենք, որ 2013թ. ամռան վերջին հայտնի դարձավ, որ Մուցքի հանքավայրում բրիտանական «Orogen Gold» ընկերությունը սպասվածից շատ ոսկու պաշարներ էր հայտնաբերել: Արդյունքների համաձայն՝ 11 մետրանոց հորատման կետում հայտնաբերվել էր ոսկի 5.56 գրամ/տոննայում:

«Orogen Gold» ընկերության պաշտոնական կայքի համաձայն՝ 2013թ. հունվարին «Orogen Gold» ընկերությունը փոխըմբռնման հուշագիր է ստորագրել Հայաստանում գրանցված «Գեոռեյդ» ՓԲԸ-ի հետ («Georaid») Մուցքի ոսկու հանքի նախագիծն իրականացնելու համար: Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածքն ընդգրկում է 24 քառակուսի կիլոմետր: Նշենք, որ ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության պաշտոնական կայքի համաձայն՝ ՀՀ Մուցքի (Բարձրավան) հանքերեւակումում երկրաբանահետախուզական աշխատանքների համար թույլտվությունը «Գեոռեյդ» ՓԲԸ-ին տրամադրվել է 2010թ., թույլտվության ավարտը 2015թ. հունիսի 30-ն է:

Մուցքը ոսկու բազմամետաղային հանքավայր է: Այն հայտնի է նաեւ Բարձրավան անունով, գտնվում է Սյունիքի մարզի Սիսիանի շրջանում՝ Մուցք (Բարձրավան) գյուղից 2,5 կմ դեպի հարավ-արեւելք:

Հետաքրքիր է, որ «Orogen Gold» ընկերությունը շեշտադրում է կատարում միայն ոսկու վրա՝ անտեսելով մյուս օգտակար հանածոները: Մինչդեռ երկրաբանական գիտությունների դոկտոր Հրաչյա Ավագյանի «Լեռնահանքային եւ մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները ՀՀ-ում» գրքում նշված է, որ հանքավայրում ոսկուց բացի առկա են պղինձ, կապար, ցինկ, արծաթ, սելեն, տելուր, բիսմուտ, թալիում, ինդիում, կադմիում, գալիում, ծծումբ եւ երկաթ:

Էկոլուր, 5 մարտի 2014թ.

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ. «Որոտանի հէկերի վաճառքը դարի հանցագործությունն է»

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 7

կորզող իշխանությունն օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ պետության գանձարանից հափշտակեց 180 միլիոն դոլար, քանի որ այդ գումարը ոչ թե մուտքագրվել է Հայաստանի բյուջե, այլ, արդարադատության նախարարի հավաստմամբ, իբրեւ թե փոխանցվել է Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր կոչվող կոնսպիրատիվ մի ընկերության, սակայն ես վստահ չեմ, որ այս տեղեկությունը ճիշտ է», – ասաց Լեւոն Տեր-Պետրոսյանը:

«Հանցագործության աստիճանը պատկերացնելու համար ավելորդ չէ նշել, որ Հայաստանի նման երկրի համար 180 միլիոն դոլարը փոքր գումար չէ՝ նկատի ունենալով, որ այն կազմում է երկրի այս տարվա բյուջեի եկամտային մասի շուրջ 7 տոկոսը: Չեմ կարծում, որ ամերիկյան ընկերություններն այս հանցագործության հետ որեւէ կապ ունեն: Նրանք օրինական կարգով բանակցել են Հայաստանի կառավարության հետ, պայմանագիրը ստորագրել էներգետիկայի նախարար Մովսիսյանի հետ եւ գումարը փոխանցել այն հաշվեհամարին, որը նրանց տրամադրվել է վերջինիս կողմից: Արդարության դեմ չմեղանչելու համար հարկ է ավելացնել նաեւ, որ ամերիկյան ընկերությունների հետ կնքված գործարքն ինքնին կարող է նաեւ որոշակի դրական հետեւանքներ ունենալ Հայաստանի տնտեսության համար՝ երկրի էներգետիկ համակարգը մոնոպոլիայի վերածվելու վտանգից զերծ պահելու եւ այդ համակարգում ցանկալի մրցակցություն ձեւավորելու տեսակետից: Դրանով հանդերձ, 180 միլիոն դոլարի վերադարձը պետական բյուջե պետք է դառնա հասարակության, քաղաքական ուժերի եւ խորհրդարանի կողմից գործադիր իշխանության առջեւ դրված ամենահրամայական եւ հրատապ պահանջը», – ամփոփեց Տեր-Պետրոսյանը:

ecolur.org
1 մարտի 2014թ.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործ է հարուցվել՝ Կարպիս Վանուշի Հովհաննիսյանի կողմից Աննա Վալենտինի Բազալուցկայային անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին:
Բոլոր անձանց եւ կազմակերպություններին, որոնք տեղեկություններ ունեն քաղաքացի Աննա Վալենտինի Բազալուցկայայի գտնվելու վայրի մասին, խնդրվում է հայտնել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ք. Կապան, Ս. Մելիք-Ստեփանյան 3/2, հեռախոս՝ /0285/ 5-29-59: